

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԲԱՆԱՍԵՐԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԲԱՆԱՍԵՐԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АЭЛИТА ДОЛУХАНЫАН
ФИЛОЛОГ, УЧЕНЫЙ, ПЕДАГОГ

БИБЛИОГРАФИЯ

ЕРЕВАН – 2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF LITERATURE AFTER M. ABEGHYAN

AELITA DOLUKHANYAN

PHILOLOGIST, SCIENTIST, PEDAGOGUE

BIBLIOGRAPHY

YEREVAN – 2017

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

Կենսամատենագիտությունը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ.Աբեղյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանի՝ գրականագետի, հայագետի, մանկավարժի գիտական, ստեղծագործական ուղին: Գրքի էջերում ներկայացված են նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակը, մենագրությունները, դասագրքերը, ճանապարհորդական նոթերն ու թարգմանությունները: Առանձնացված են գրականագետին տրված գնահատականները և նրա հետազոտությունների մասին գրված գրախոսությունները:

Կենսամատենագիտությունը նախատեսված է հայագետների և հայ գրականությունն ուսումնասիրողների համար:

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Հայաստանի գրողների միության անդամ Աելիտա Դոլուխանյանն արդի հայ գրականության, մշակույթի, գիտության ակնառու ներկայացուցիչներից է:

Նրա գիտական հետազոտությունների և հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է մշակույթի և գիտության ամենատարբեր բնագավառները՝ աշխարհին ներկայացնելով հայի ամբողջական կերպարն ու ազգային արժեքները: Ա. Դոլուխանյանի ուսումնասիրությունները, մենագրությունները, ուղեգրությունները, թարգմանություններն ու գիտական հոդվածները միտված են վեր հանելու այն պատմական վիճահարույց հարցերը, որոնց պարզաբանումը կօգնի ճշգրտելու հայ ժողովրդի տեղն ու դերը պատմության քառուղիներում: Նրա ուսումնասիրություններում զուգորդված են հայի հոգին և միտքը, ինչը հնարավորություն է տալիս ընթերցողին վերլուծել սեփական պատմությունը և գրականությունը, գնալ դեպի արմատները և ամուր քայլել դեպի ապագան: Մա է Ա. Դոլուխանյանի հետազոտությունների հիմնական առանցքը, որը բարձր պատասխանատվությամբ և հպարտությամբ նա ներկայացնում է ինչպես առանձին ուսումնասիրություններում, այնպես էլ միջազգային ու հանրապետական գիտաժողովներում:

Ուշադրության կենտրոնում պահելով հայ հին և միջնադարյան գրականության հրատապ խնդիրները՝ նա իր ուսումնասիրության շրջանակի մեջ ընդգրկում է նաև ժամանակակից հայ գրականության առջև ծառայած հարցադրումները՝ մնալով ժամանակի շրջապտույտի մեջ: Ակնառու է նաև Ա. Դոլուխանյանի գործունեության հայագիտական ուղղվածությունը: Հայագիտությանը մատուցած նրա ամենամեծ ծառայությունը «Եվրոպացի հայագետներ» մատենաշարն է, որի յոթ հատորներն արդեն դրված են ընթերցողի սեղանին:

Գրականագիտական, հայագիտական հետաքրքրությունների կողքին անհրաժեշտ է ընդգծել մանկավարժին: Շուրջ 50 տարի դասախոսելով

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ Ա. Դոլուխանյանը պատրաստել է իր հայրենիքին նվիրված մասնագետներ և ուսուցիչներ՝ նպաստելով կրթության ոլորտի բարեփոխումներին: Նրա գիտական և մանկավարժական գործունեության արդյունքում տասնյակից ավելի ասպիրանտներ ու հայցորդներ պաշտպանել և ստացել են գիտական աստիճաններ՝ դառնալով գիտության մշակներ:

Ասվածի վառ ապացույցն է ընթերցողի սեղանին դրված այս կենսամատենագիտությունը, ուր ամփոփված է գրականագետ, հայագետ Ա. Դոլուխանյանի գիտական, ստեղծագործական ուղին՝ սկզբից մինչև արդի շրջանը: Գրքի էջերում ներկայացված են հետազոտողի գիտական հետաքրքրությունները, մենագրությունները, ճանապարհորդական նոթերն ու թարգմանությունները: Առանձնացված են տարբեր ժամանակներում գրականագետին տրված գնահատականները և գրախոսությունները:

Այն նախատեսված է հայագետների և հայ գրականությունն ուսումնասիրողների համար:

Մայա Գրիգորյան

*Հայաստանի ազգային գրադարանի
մատենագիտության և գրադարանագիտության
բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու*

ОТ СОСТАВИТЕЛЯ

Литературовед, доктор филологических наук, профессор, член-корреспондент НАН РА, заслуженный деятель культуры РА, заведующая кафедрой древней и средневековой армянской литературы и методики ее преподавания Армянского государственного педагогического университета, член Союза писателей Армении Аэлиа Долуханян является видной представительницей современной армянской литературы, культуры и науки.

Круг её научных исследований и интересов охватывает самые разные области, представляя миру законченный образ армян и их национальные ценности. Исследования, монографии, путевые заметки, переводы и научные статьи А. Долуханян имеют целью выявить те исторические спорные вопросы, прояснение которых поможет уточнить место и роль армянского народа на исторических перекрёстках. В её исследованиях отражаются душа и мысль армян, что позволяет читателю проанализировать собственную историю и литературу, дойти до корней и твердо шагнуть к будущему. В этом основной смысл исследований А. Долуханян, который она с высокой ответственностью и гордостью представляет в отдельных исследованиях. Она часто выступает на международных и республиканских симпозиумах и конференциях.

Держа в центре внимания злободневные проблемы армянской древней и средневековой литературы, она включает в круг своих исследований и вопросы, стоящие перед армянской современной литературой, оставаясь в круговороте времени. Очевидна также арменоведческая направленность деятельности Аэлиа Долуханян. Её самая высокая заслуга перед арменоведением – серия книг «Европейские арменоведы», семь томов которой уже лежат на столе читателя.

Наряду с литературоведческими и арменоведческими интересами, следует отметить и педагогическую деятельность. Профессор Долуханян более полувека преподаёт в Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, А. Долуханян подготовила преданных своей Родине специалистов и учителей, способствуя реформам образования. Под её научным и педагогическим руководством более десяти аспирантов и соиска-

телей защитили диссертации и получили ученую степень, становясь сподвижниками науки.

Ярким доказательством сказанного является данная биографическая библиография, в которой срезюмирован творческий путь литературоведа и арменоведа А. Долуханян сначала и до современного периода. На страницах книги представлены научные интересы исследователя, монографии, путевые заметки и переводы. Отдельно приводятся выраженные в разное время в адрес литературоведа мнения и написанные рецензии.

Книга предназначена для изучающих армянскую литературу.

Майя Григорян

Заведующая отделом библиографии и библиоведения

Национальной библиотеки Армении,

Кандидат филологических наук

A WORD FROM THE AUTHOR

A.G. Dolukhanyan, Ph.D., is a literary critic, professor, correspondent member of the National Academy of Sciences of the Republic of Armenia, recipient of the Honorable Cultural Contributor award of Armenia, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and the Methodology of Its Teaching at the Armenian State Pedagogical University, member of the Writers Union of Armenia, and a prominent representative of modern Armenian literature, culture and science.

The sphere of her scientific research and interests includes diverse fields, presenting to the world a complete image of Armenians and their national values. Dr. Dolukhanyan's research, monographs, travelogues, translations and scientific research articles are aimed to address and reveal those historically disputed issues, clarifying which will help to define the place and the role of the Armenian people on the crossroads of history. Her research reflects and reveals the soul and the thinking of Armenians, helping readers analyze their own history and literature, to reach the roots and to firmly move towards the future. This is the main goal of Aelita Dolukhnyan's research, which she shares broadly at different international and Armenian conferences, symposia, and forums.

Concentrating her attention on the topical problems of Armenian ancient and medieval literature, Dr. Dolukhanyan includes in the sphere of her research issues of Armenian modern literature as well, remaining in the vortex of time. Her biggest contribution to Armenian studies is the series of books titled *European Armenologists*, and seven volumes in this series have already been published.

In addition to her literary and Armenian studies, one must cite her pedagogical contributions. She has taught for over half a century at the Kh. Abovian Armenian State Pedagogical University. Dr. Dolukhanyan has trained generations of experts and teachers devoted to their motherland. She has also driven innovation, contributing to reforms in education. With her research and pedagogical guidance, over ten post-graduate students have defended their dissertations and earned advanced degrees, becoming accomplished researchers.

This bibliography is a striking proof of Dr. Aelita Dolukhanyan's accomplishments, summarizing her entire creative journey as a literary critic and

armenologist. It presents and lists her research interests, monographs, travelogues, and translations. Included also are previously published critiques of her work, along with addresses commending and paying homage to Dr. Dolukhanyan's contributions.

The book is intended for specialists studying Armenian literature.

Maya Grigoryan, Ph.D,
*Chief of the Department of Bibliography of
the National Library of Armenia*

ՀԵՌԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 77/2 76 14/02 40=



ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ 12 ԲՆ 15 ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՍԿՈՒԹՅԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՈՎ ՀՀ ԳԱՍ
ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆԻ՝

ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ
ՋԵՐՄՈՐԵՆ ՀԱՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՁԵՋ ԾՆԱԴՅԱՆ 75-ԴՆ ՏԱՐԵԴԱՐՉԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԳՆԱՀԱՏԵԼԻ Է ՁԵՐ ԱՎԱՆԴԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ ՁԵՐ ՀԵՂԻՆԱԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐՆ ՈՒ
ԱԵՆԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԵՎՈՐ ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՆ ՀԱՅԱԿԻՏՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵՋՈՒՄ ՄԵԾ Է
ՁԵՐ
ՎԱՍՏԱԿԸ ՆԱԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԿՐԹԵԼՈՒ ԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՈՐՀԱԿԱԼ ԳՈՐԾՈՒՄ
ՄԱՂԹՈՒՄ ԵՄ ՁԵՋ ՔԱՋԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՐՋԱՆԻԿ ԿՅԱԼՔ ԵՎ ՆՈՐ
ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ՝

*ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի
շնորհավորական հեռագիրը*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

«ԿԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ
տիկին ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻՆ»

Հարգելի տիկին Դիլուխանյան,

շնորհավորում եմ Ձեզ ծննդյան օրվա առթիվ:

Տասնամյակների Ձեր վաստակով Դուք մեծ ներդրում ունեք հայ գրականագիտության ավանդույթների զարգացման գործում: Ձեր կենսագրությունն անխզելիորեն կապված է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ, որտեղ գիտական եւ մանկավարժական գործունեություն եք ծավալում երկար տարիներ՝ կրթելով ու դաստիարակելով բանասերների ու մանկավարժների մի քանի սերունդ:

Մաղթում եմ Ձեզ առողջություն, հաջողություն եւ ամենայն բարիք:

ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆ

***ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի
շնորհավորական նամակը***

Մեծարգո՝ Անլիպա Գուրգենի

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը սրտանց ու ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ Ձեր ծննդյան փառապանծ հորեյանի առթիվ:

Ակադեմիական համությունը Ձեզ ճանաչում է որպես հանրահայտ գրականագետի, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է հայ գրականության պատմության ուսումնասիրմանը, միջնադարյան տարրերի հեղինակների երկերի գիտաքննական քննադրերի կազմմանը, այլազգի շատ գիտնականների հայագիտական հետազոտությունների վերլուծմանն ու գնահատմանը: Մեք խորապես գնահատում ենք Ձեր հեղինակած բազմաթիվ մեմուարություններն ու ձեռնարկները, Ներսես Մոկացուն, Ալիսիա Կիրակոսյանին, Նորայր Աղալյանին, Արշակ Չուպանյանին, Ըսող Ազմազուրին, Ֆրեդերիկ Մակլերին, Էդուարդ Դյուրրիեին, Վիկտոր Լանգլուային, Մարի Ֆելիսիտե Բրոսսին, Ֆրեդերիկ Ֆելդին, Անտուան Ժան Մեն-Մարտենին նվիրված Ձեր աշխատությունները, որոնք սեղանի գիրք են գրականագիտությանը զբաղվող շատ մասնագետների համար:

Թանկագին հորեյար, հիացմունքի է արժանի Ձեր մանկավարժական երկարամյա րեզնավոր գործունեությունը և Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Ձեր անսահման նվիրվածությունը ինչպես երիտասարդ սերնդի կրթման, այնպես էլ գիտական կադրերի պատրաստման գործին: Եվ անկասկած է, որ այսօր Ձեր կրթած ու դաստիարակած ուսուցիչների մի մեծ բանակ, բազմաթիվ գրականագետներ երախտագիտությամբ են նայում Ձեզ և նույնպես շնորհավորում Ձեր փառապանծ հորեյանը:

Միրելի՛ հորեյար, տաղանդավոր գիտնականի ու մանկավարժի, Հայաստանի իսկական քաղաքացու, հայրենամակեր ու ազնիվ մարդու Ձեր անձնական նկարագրով Դուք վաստակել եք մեր բոլորի համակրանքը:

Միրելի՛ Անլիպա Գուրգենի, նորից շնորհավորելով Ձեր վաստակաշատ հորեյանը՝ մաղթում ենք Ձեզ քաջատոկչություն, արևշատություն, երկար տարիների բերքատառ գործունեություն և ամենայն բարիք:

ՀՀ ԳԱԱ նախագահ
ակադեմիկոս



Բ. Մարտիրոսյան

Ռադիկ Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ հայագիտության և
հասարակական գիտությունների
բաժանմունքի ակադեմիկոս քաղաքապետ
ակադեմիկոս

Յու. Լևոնյան

Յուրի Սուվարյան



Կան անհատներ, որոնց համար սարել նշանակում է առարել, հայրենաբերել նորը, ինքնակազմաբերել, անկախ կերպով գտնել և զննարել սեփական մշակույթը: Նրանց սրբազան գործունեությունն սարում է ինքնարավ, կարծես մի այլ կյանքով՝ իր շուրջը չհամարելով հնարարի միջավայր: Այդպիսի միջավայր է սրբազան ՀՀ ԳԱԱՐՊը, անդամ, քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անիտա Գոլոյանյանը:

Մեծարգո՝ Անիտա Գուրգենի Գոլոյանյան, ուսանողական փարհներից սկսած՝ մի անշանչիր նվիրումով՝ Դուր նպատակ ու նպատում էր քուհի քարի համարսի փարածումանը: Դուհու սասիրունական փարհներին Չիր գիտական ղեկավար նշանավոր հայագնար Ասարուր Մնացականյանից սրացած ավանդներն անմնացող փոխանցում էր ուսանողներին՝ հանդգնած, որ հայ ժողովրդի վաղվա օրն այսօրվա նրարասարղներից է կախված, նրանց յուրացրած ավանդներից, որի սրարասխանսարուն նան Դուր էր:

Չիր գիտական գործունեությունն անփոփոջ շուրջ 30 ուսումնասիրությունների, 400-ից ավելի հոդվածների, ուշագրավ և քովանդակալից զննությունների սրարաչք ազգանվիր ուղղվածությունն է խորննացիական ավանդներով մեր ժողովրդի այսօրը կերպելու մրարհոգությունը: Լայնահայաց կերպով էր քրանում այլ ժողովրդների մշակույթները, դրանցում առկա ուսանելի դրույթները սիրով և քրարարականորեն մեկնարանում Չիր նանաշողական և քրեկարվական հոդվածներում՝ անցկացնելով սեփական մշակույթի քովով: Այդ զուգանեռների հնարարի արարահայությունը նան Չիր - «Հանդեղանուր ի մա ս ք ա խ ո ս ո յ ո յ ն ն ե ռ » գ ի թ թ ն է (Ե ռ ն ա ն, 2012):

Քազմազան են Չիր հնարարությունները հայ էին, միջնադարյան, նոր և նորագույն գրականության, հայագիտության խնդիրներից մինչև քնագրագիտական, աղբյուրագիտական աշխարհները, վկան Ներսես Մոկրացու (1975, 1985) խաչարուր Կեչառեցու նրկերի քննական քնագրերն են (1988), իսկ «Ներսես Մոկրացի» (Էջմիածին, 2009), «Հոգու և մարմնի սրտրենց միջնադարի հայ քնարերգույթան մեջ» (Երևան, 1987) ուսումնասիրությունները ն ա խ ա դ ու ռ ն ն ն ո թ ա ն ո թ հ ա թ ց ա դ ռ ո յ ն ն ե ռ ի հ ա մ ա թ:

2000թ. էիննելով «Եվրոպացի հայագնարներ» մարինաչարը՝ Դուր ազդարարեցիր հայագիտության մի նոր նյուլի խորքային ուսումնասիրության անիրաճեչարության մարին և գիտական աշխարհին ներկայացրիր հայ մշակույթին անուրանալի նպատր քրած՝ նվրուպացի հայագնարների գիտական ժառանգության խորքային քննությունը: Չնիցա Նեխ Մարի Չնիխիդն Բրոսանի, Վիկտոր Լանգլուալի, Էդուարդ Գյուլոթիների, Ֆրեդերիկ Չնդիի, Ֆրեդերիկ Մակլեթի, Մեն Մարտենի գիտական վասարակն ամրոդացնող ուսումնասիրություններն այսօր արղեն ընրերջողի սեղանին են՝ որպես փարհների Չիր մրտրունների և քրեկայան աշխարանրի արղյունը՝ քրուպած սեփական սրարունության նկարմամբ արժանասարավության քարչք զգացումով: Անուրանալի է ՀՀ մշակույթի վասարակավոր գործի, վասարակավոր մանկավարժի Չիր նպատրը 1990թ.-ից է: Արույանի անվան հայկական պերական մանկավարժական ինսարիտուրի քանասիրական ֆակուլտետի

մախ՝ հայ գրականության և մյուս դասավանդման մեթոդիկայի սպա՝ 2013թ.-ից հայ էին և միջնադարյան գրականության և մյուս դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն էր, և երկար տարիների Չեր դասախոսական աշխատանքի փնտսանքի կողմը դրսևորվում է նաև ուսանողների կյանքում ունեցած կարևոր դերակատարումով, Չեր դեկավարությանը 13 և ավելի հայցորդներ ու ասպիրանտներ աշխարհի և աշխարհում են գերական ենթադրյուն ունեցող և նորություն բերող բնաներով: Չեր հեղինակությանը ուսանողի սեղանին են «Հայ գրականության պատմություն (Հայ էին և միջնադարյան գրականություն)» (Երևան, 2006), «Հայ ժողովրդական բանասիրություն» (Երևան, 2008), «Դրվագներ հայ գրաբնագրական մտքի պատմությունից» (Երևան, 2009), «Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը» (Երևան, 2012), «Գեղարվեստական գրականության վերլուծության մի քանի սկզբունքներ» (Երևան, 2013) դասագրքերը:

Մեզ համար պարիզ է աշխարհի նվիրյալ գիտնականի հեզ, ում գիտական հեզարդրությունների շրջանակը չի սահմանափակվում միայն միջնադարով, Խոր սկզբիփորեն արչագանցում էր ժամանակակից գրականության արդի խնդիրներին, վկան են «Շատյ Ազնավորը բանասրիզ» (Երևան, 2002), «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (Երևան, 1999, 2016), «Գրիշա Դարբինյանի գրական խոհերը» (Երևան, 2005), «Նորայր Աղայանի սրեղծագործությունները» (Երևան, 2011) ուսումնասիրությունները, Չեր հարցազրույցները քն գրական գործիչների և քն գրական տարբեր երևույթների շուրջ, տարբեր լիզումներից կապարած քարդմանությունները:

Հանապազ պրպողի Չեր սրեղծագործ սկիզբությունը չի սահմանափակվում ՀՊՄՀ-ով Դուր ԳԱՄ «Պատմաբանասիրական հանդես» և «Գրական բերրի» խմբագրական խորհուրդների աննասկրիվ անդամներից էր, ՀՊՄՀ և Մ Արեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտական խորհուրդների Ա Արտահայտի սեղական մրցանակներ շնորհող հանձնաժողովի նախագահ, Մաշտոցի անվան Մաքենագրական փառապաշարի և նվիրյալ բներգողներից:

Չեր գիտնականիկարծական, հասարակական գործունեությունը հայրսի է հանրասեղություն մասշտաբով (և ոչ միայն), որի համար տարգևատրվել էր Մովսես Խորենացու մեղալով (2003թ.), արծանացել էր Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղայան» մրցանակին (2008-ին «Իրեղիբիկ Ֆելիսի հայագեղ» մեծագրության համար), «Ճ. Նանենի սպի հուշամեղալի», ՀԳՄ «Գրական փառապաշարի համար» և «Խոշարտուր Արույան» մեղալների, 2011-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկի հուշամեղալի»:

Չեր հարուստ կենսագրության նկատմամբ շնորհակալ դրսևորումը գրականագիտության քնագալատում ունեցած մեծ ներդրման համար 2010 թ. ՀՀ ԳԱՄ քրթակից անդամ բնորվիլն էր, քրթրիս հայրանակը:

Հոգաբար մայր էր, նվիրված բնիկը, լայնախոհ գիտնական, քարդացական մասնկալարծ և պատասխանատու մարդ Չեր կյանքի քրթր հարաբերություններում, և մեր մեծագույն ցանկությունն է Չեզ հարգարծան գիտնականին և ուսուցչին, փեսանի նույն ավյունով աշխարհիս, ուսանողներով, հեզարդրաներ միջավայրով և հոգաբարությանը շրջապարված, նորանոր ձեռքբերումներով, ստող և նուանդում:

ԵՄՄԱՄԵՆ Կ. ԱՅՄԱՅՆՈՒ ԱՆԱՆ,
ՀՍԳՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆՎԵՆԻՐՈՒԿԱՆ,
ՀԱՅԿԱՄՍԻՆԻՍՏՈՍ

Մ. Առաքելյան
ՌԱԲԵՆ ՄՐԶԱՆՈՒՅԱՆ



ՐԱՍՊՈՒՄԱՆ, ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԻՎԱՆ
ԱՇՈՏ ԳԱՄԱՅՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԸ

Աելիտա Դոլուխանյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվում հայ գրականության պատմության բոլոր փուլերին ու արդի ընթացքին, գրականության տեսության և հայ գրականության ժանրային համակարգին վերաբերող հարցերը, ինչպես նաև եվրոպական հայագիտության և ի մասնավորի ֆրանսիական հայագիտության պատմությունը:

Հայ հին և միջնադարյան գրականության պատմությունը և առանձին հեղինակներին ու թեմաներին նվիրված գործերը գրված են սկզբնաղբյուրային նյութի, այդ թվում և ձեռագրային, քաջիմացությամբ և առկա հայկական, ռուսական ու եվրոպական տեսական գրականության քաջիմացությամբ, շնորհիվ որի քննվող նյութը դիտարկվում է ընդհանուր միջնադարյան գրականության լայն համապատկերում:

Ասվածի բնորոշ օրինակն է «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարյան հայ քնարերգության մեջ» (Երևան, 1987թ.) գիրքը:

Նախ ներկայացվում է հոգու և մարմնի փոխհարաբերության հարցը անտիկ մտածողների երկերում և 5-րդ դարի պատմագրական ու կրոնաաստվածաբանական երկերում, որոնք տեսական այն հիմքն են, որի վրա են բարձրացել այս թեմայով գրված չափածո ստեղծագործությունները:

Նշվում է, որ միջնադարյան հայկական համաբնույթ ստեղծագործությունները մի կողմից հիմնվել են հոգու առաջնայնության գաղափարի և մյուս կողմից՝ ժողովրդական կենսասիրության վրա:

Բնագրային հարուստ նյութի օգտագործմամբ ցույց է տրվում, թե գրականության աշխարհայնացման ընթացքին զուգահեռ հոգու և մարմնի ավանդական հակադրությունն ինչպես է ընկալվում որպես նրանց ներդաշնակություն:

Հիշյալ թեմայով նյութերը քննվում են թե՛ ըստ առանձին հեղինակների գործերի՝ հիմք ընդունելով հայ գրականության ժամանակային պարբերացումը, և թե՛ ըստ ժանրերի, ինչպես, օրինակ, հոգու և մարմնի վիճաբանությունը պատկերող ստեղծագործությունները:

Միաժամանակ գուգահեռ է տարվում կյանքի և մահվան, վարդի և սոխակի ավանդական մոտիվներով ստեղծագործությունների հետ:

Այս թեման եթե ենթադրում էր կրոնափիլիսոփայական և քնարական ըմբռնումների տեսական հարցադրումների շրջանակում կատարվող քննություն, ապա Խաչատուր Կեչառեցուն և Ներսես Մոկացուն նվիրված ուսումնասիրություններն արդեն գրված են ավելի շատ պատմաբանասիրական մոտեցմամբ, քանի որ հիշյալ հեղինակների ստեղծագործությունները դիտարկվում են հայ ժողովրդի պատմության, ազատագրական ակնկալիքների ու հայ կյանքի վերածնության համատեքստում:

«Հայ քնարերգուներ» շարքով Խաչատուր Կեչառեցու (1260–1330թթ.) ստեղծագործությունների ընտրանին ներկայացնող գրքի առաջաբանում նախ ընդգծվում է «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» ստեղծագործության կարևորությունը ժամանակի ազգային-քաղաքական ակնկալիքների առումով, թե այն ինչպես է սերտորեն առնչվում մեկ այլ ողբի՝ Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» ստեղծագործության հետ:

Վեր են հանվում առկա գաղափարական ընդհանրությունները, որոնք իրենց հերթին պայմանավորված էին ժամանակի առաջադրած խնդիրներով:

Ցույց է տրվում Կեչառեցու ստեղծագործությունների կապը ժողովրդական մտածողության, ինչպես նաև նախորդող շրջանի հայ բանաստեղծության հետ:

Ինչ վերաբերում է գրքում տեղ գտած բնագրերին, ապա դրանք ընտրված են այն սկզբունքով, որ ներկայացվեն Կեչառեցու պատմա-

քաղաքական, խոհափիլիսոփայական ու ծիսական բնույթի տաղերը և Ալեքսանդր Մակեդոնացու Պատմությանը վերաբերող չափաձու հատվածները: Առաջին անգամ ներկայացվում է նաև Օրբելյանի «Ողբի» քննական բնագիրը՝ որպես Կեչառեցու գործերի հետ մի ամբողջություն կազմող ստեղծագործություն:

Գրքում տեղ գտած ստեղծագործությունները համեմատվել են Մատենադարանի ձեռագրերի հետ: Ծանոթագրություններում բացատրվել են աստվածաշնչային և պատմական հատուկ անունները, մատնացույց են արվել Աստվածաշնչի տարբեր հատվածների և հայ գրականության պատկերային համակարգի հետ կապված տողերը:

Առանց նման ծանոթագրությունների ընթերցողների գերակշիռ մասը չէր կարող հասկանալ, թե Կեչառեցին ինչ նկատի ունի կամ ստեղծագործական ինչ հնարի է դիմել:

Նմանատիպ մոտեցմամբ է գրված նաև Ներսես Մոկացուն նվիրված մենագրությունը (Ս. Էջմիածին, 2009թ.): Մինչ այդ Ա. Դոլուխանյանը հրատարակել էր ուշ միջնադարի այս հեղինակի ստեղծագործությունները:

Մենագրության մեջ նրա գրական ժառանգությունը դիտարկվում է բանաստեղծի գործունեության համապատկերում: Ընդգծվում է նրա դերը 17-րդ դարի հայ կյանքի վերանորոգության շարժման մեջ, գործունեությունը Սյունյաց Մեծ և Լիմ անապատներում:

Մոկացու ստեղծագործությունները ներկայացվում են թեմատիկ բաժանմամբ: Վերստին անդրադարձ է կատարվում հոգու և մարմնի փոխհարաբերության հարցին: «Վիճաբանութիւն երկնի և երկրի» անվանվող գործի առիթով քննվում են միջնադարյան համարնույթ չափաձու վիճաբանական բնույթի հարցումները երկնքի և երկրի միջև:

Մոկացու արժարձած թեմաները քանի որ իրենց նախօրինակն ունեն հայ միջնադարյան բանաստեղծության մեջ, ուստի քննվում է իր նախորդներից նրա կրած ազդեցության հարցը:

Մանրամասնորեն վերլուծված է Երուսաղեմի 1187թ. գրավման առթիվ գրված ողբը: Հայ ժողովրդի ազատագրական ակնկալիքների համատեքստում է բացատրվում, թե հարյուրամյակներ առաջ տեղի ունեցած իրադարձությունն ինչու է նման ողբասացության նյութ դարձել:

Իր ուսումնասիրությունների առանցքում ունենալով հայ հին և միջնադարյան գրականությունը՝ Դոլուխանյանը զբաղվել է նաև 19–20-րդ դարերի հայ գրականության պատմության տարբեր հարցերի քննությամբ: Նա իր կարևոր մասնակցությունն է բերում և արդի գրականության ընթացքին՝ արձագանքելով Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ստեղծագործող հայ և օտարազգի գրողների երկերին:

Գիտական և հասարակական մամուլում, տարբեր գիտաժողովների նյութերում տեղ գտած հրապարակումներից բացի նա ունի նաև ժամանակակից երեք հայ հեղինակների երկերի վերլուծությանը նվիրված առանձին գործեր:

Նոր շրջանի գրականության հարցերը և տարբեր հեղինակների ստեղծագործությունները դիտվում են ազգային ու համամարդկային հարաբերակցության շրջանակում, արժարժված թեմաների հայ դասական գրականության մեջ իրենց ունեցած նախօրինակների հետ հարաբերությամբ: Ասվածը վերաբերում է նաև Նորայր Աղայանի (Երևան, 2011թ.) ստեղծագործությունների վերլուծությանը, թե նրա երկերում՝ որպես Մեծ եղեռնը վերապրածների ժառանգ, անցյալից եկող ծանր հիշողությունն ինչպես է զուգակցվում այսօրվա աշխարհի ու քաղաքային միջավայրի պատկերման հետ: Անկախության շրջանի նրա արձակին բնորոշ գերիրապաշտությունը՝ իրականության գրոտեսկային ու արսուրդային պատկերներով, Դոլուխանյանը համարում է արտահայտությունը մեր ժամանակի դժվարին իրականության: Նորայր Աղայանի ստեղծագործական դիմանկարը

ներկայացված է որպես արձակագրի, դրամատուրգի, հրապարակախոսի և գրականագետի:

Դոլուխանյանը սփյուռքի մեր հայրենակիցներից առանձին աշխատանքներ է նվիրել Շառլ Ազնավուրին և Ալիսիա Կիրակոսյանին:

«Շառլ Ազնավուրը Բանաստեղծ» (Երևան, 2002թ.) գրքում վերլուծությունը կատարվում է շանսոնի՝ որպես երգի խոսքի և երաժշտության միասնության շրջանակում: Հեղինակին հաջողվել է վեր հանել Ազնավուրի սիրո աշխարհը տարաբնույթ դիտարկումներով ու հոգեբանական նրբերանգներով:

Ինչպես ծագումով հայ օտարագիր մյուս գրողների մասին գրելիս, այստեղ ևս քննությունը հասցվում է մինչև հայկական ակունքները: Բնորոշ օրինակ է «Օվսաննա» երգի հարազատությունը շարականների, թե Բանաստեղծի խոհերի ու կենսափիլիսոփայության վրա ինչպես է ազդել իր ազգային պատկանելությունը: Որպես ամփոփում ընդգծվում է, որ Ազնավուրի փիլիսոփայական խոհերն ունեն հանգստացնող, վշտերը փարատող նոտաներ:

«Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (Երևան, 2016թ.) գործում Բանաստեղծուհու գրական ժառանգությունը դիտված է հայ Բանաստեղծության համատեքստում, թե՛ ամբողջության մեջ և թե՛ առանձին թեմաների ու պատկերների դեպքում, ինչպես օրինակ՝ մոխիրներից հառնելը Տերյանի հետ զուգահեռում: Նույնը վերաբերում է սիրո թեմայի ու հայրենների միջև առկա ընդհանրությունների: Այսպիսով, թեմատիկ յուրաքանչյուր մոտիվ դիտարկվում է անցյալի հայ Բանաստեղծության համատեքստում: Հատուկ վերլուծված են Ա. Կիրակոսյանի ստեղծագործություններում տեղ գտած քրիստոնեական հասկացությունները:

Այս գիրքը կարելի է համարել բնորոշ օրինակը, թե ինչպես պետք է զուգակցել և վեր հանել ազգային ակունքները և արդի գրա-

կանության համընդհանուր մոտիվները միևնույն ստեղծագործության մեջ:

Առանձին խումբ են կազմում հայ գրականության դասավանդման մեթոդիկայի հետ կապված աշխատանքները: Ուրվագծային ակնարկով տրված է հայ գրականության՝ մինչև 18-րդ դարն ընկած շրջանի պատմությունը հայ հին և միջնադարյան գրականությանը նվիրված աշխատանքում (Երևան, 2006թ.): Բերված են մի շարք հեղինակների՝ Մաշտոցից մինչև Սայաթ-Նովա, ակնարկային դիմանկարները: Վեր է հանվում բանաստեղծից բանաստեղծ փոխանցվող հայ բանաստեղծության ներքին ընթացքը:

Որպես ուսումնական ձեռնարկ՝ յուրաքանչյուր բաժնի վերջում կան համապատասխան հարցերը և առաջադրանքները, որոնք վերաբերում են տվյալ թեմային:

Հայ գրականության դասավանդման մեթոդիկայի ձեռնարկում (2006թ.) հանգամանալից ներկայացված են դասավանդման արդի մեթոդները, որոնք հարաբերվում են հայ մանկավարժության դարավոր ավանդների հետ: Նշվում է, թե գրականությունն ըստ գրական ուղղությունների և տարիքային խմբերի ինչպես պետք է դասավանդել:

Վերը բերված, ինչպես նաև հայ գրաքննադատական մտքին (2009թ.) և հայ ժողովրդական բանահյուսությանը (2008թ.) նվիրված ձեռնարկները նպատակ ունեն մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում հիշյալ առարկաներին վերաբերող դասընթացները և դրանցում վերլուծվող նյութը ներկայացնել գրքային ձևով: Նույն այս նպատակով հիշյալ ձեռնարկների վերջում կան հավելվածներ, ուր բերված են տվյալ թեմային վերաբերող բնագրային սկզբնաղբյուրային նյութերը, ինչպես նաև տվյալ առարկայի ու նրանում հիշված թեմաների մասին գրականության մատենագիտական ցանկերը:

«Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» (Երևան, 2004թ.) աշխատանքում նշվում է, որ Չոպանյանը հայ հին գրականության ուսումնասիրմամբ իր առջև խնդիր է դնում հին գրականության միջոցով նպաստել ժամանակի հայ գրականության և մշակութային կյանքի զարգացմանը, ինչպես նաև այն ներկայացնել օտարներին: Չոպանյանը բնորոշվում է որպես մի գրականագետ, ում հայ գրականության տարբեր հարցերին տրված գնահատականներն արդիական են նաև այսօր և գրված են անտիկ ու եվրոպական գրականության քաջիմացությամբ:

Նրա նամակներից հանված են հայ հին գրականությանը վերաբերող հատվածները, անդրադարձ է կատարված «Նարեկի» նրա վերլուծությանը:

Չոպանյանն ինքը եվրոպական ու հատկապես ֆրանսիական ոճի գեղագետ էր, ժամանակի մշակույթի քաջիմացությամբ, ում գրածները վերլուծելու և արժևորելու համար հարկավոր են նույն այս հատկանիշները, ուստի պատահական չէ, որ այս թեմային հենց Դոլուխանյանն է անդրադարձել: Հիշյալ գրքույկը կարելի է համարել եվրոպական հայագիտությանը դիմելու նրա նախաքայլը:

Ոչ միայն գրական ու ճանաչողական, այլև ազգային-քաղաքական կարևորություն ունի «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը, ուր Դոլուխանյանը 7 գրքով ներկայացնում է եվրոպական տարբեր գիտնականների հայագիտական գործունեությունը:

Սեն–Մարտենից Ֆրեդերիկ Ֆելդի ընկած շրջանի հեղինակներին վերաբերող գրքերում երևում է ֆրանսիական հայագիտության զարգացման ընթացքը հայագիտության ընդհանուր հարցերի մատնանշումից մինչև առանձին գիտակարգերին վերաբերող քննությունը:

Շարքը գիտաճանաչողական բնույթից գիտաքննական ուղղվածություն է ստանում, որովհետև ոչ միայն բերվում են եվրոպական հայագետների ասածները և հայտնված կարծիքները, այլև դրանք հարաբերվում են տվյալ հարցի վերաբերյալ այսօր առկա

ըմբռնումների հետ, շնորհիվ որի մատնանշվում են ժամանակի քննությունը բռնած տեսակետները և այժմ պարզապես պատմական արժեք ունեցող և տվյալ ժամանակաշրջանի մեջ ստուգաբանվող կարծիքները:

Սա շատ կարևոր հարց է և պահանջում է ճիշտ մոտեցում, որովհետև եթե առանց համապատասխան քննական վերաբերմունքի միայն նկարագրվի, թե ինչ է ասել այս կամ այն հայագետը, ապա կստացվի պարզ վերաշարադրանք: Նաև հակառակը՝ եթե հայագիտության այսօրվա չափանիշների և նվաճումների տեսանկյունից քննադատվեն 19-րդ դարում հայտնված տեսակետները, ապա դա կլինի ոչ պատմական և հակագիտական մոտեցում:

Դոլուխանյանը պատմական մոտեցման և այսօրվա ըմբռնումների հետ հարաբերակցությամբ է գիտականորեն արժևորում եվրոպացի հայագետների թողած գիտական ժառանգությունը:

Նման մոտեցմամբ ոչ թե գրում է, թե հայ դասական պատմագրության այս կամ այն երկի բնագիրն ինչ բացթողումներով է հրատարակվել, այլ թե հրատարակությունից հրատարակություն, շնորհիվ բնագրագիտական նոր սկզբունքների մշակման և տվյալ երկի նոր ձեռագրերի ի հայտ գալու, ինչպես է ճշտվել և ամբողջացել ու ներքին ճիշտ գլխակարգմամբ ներկայացվել տվյալ բնագիրը:

Շարքի գլխավոր նպատակը քանի որ հիշյալ գիտնականների տեսական ըմբռնումները և դրույթները հայ ընթերցողին ներկայացնելն է, ուստի թարգմանաբար մեջբերում կամ վերաշարադրում է նրանց հայտնած կարծիքներն ու տեսակետներն այս կամ այն հարցի վերաբերյալ:

Ֆրանսիական հայագիտության արշալույսն է ներկայացնում Սեն–Մարտենին (1791-1832թթ.) նվիրված «Սեն–Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր» (Երևան, 2014թ.) ուսումնասիրությունը:

«Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» ծավալուն աշխատանքի երկու հատորների առաջաբանները Դոլուխանյանը ներկայացնում է թարգմանաբար և հանգամանալից մեկնաբանություններով:

Ընթերցողը որպեսզի առավել պատկերացում կազմի Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ Սեն–Մարտենի գրածների մասին, թարգմանաբար բերում է Հայաստանի տեղանունների ին նվիրված մի քանի տասնյակ բառահոդվածներ, որոնցում նշում է, թե դրանք հայ պատմիչների որ երկերում են հիշվում և նրանց հետ ստուգաբանական ինչ ավանդություններ են կապվում:

Վերը նշված պատմականության սկզբունքով է արժևորում Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփաննոս Օրբելյանի Պատմությունների Սեն–Մարտենի հրատարակությունները:

Ժամանակագրորեն իրար հաջորդող տարբեր հեղինակների միջոցով կազմելով ֆրանսիական հայագիտության պատմությունը՝ Սեն–Մարտենի համար նշում է, որ երբ նա կատարում էր իր ուսումնասիրությունները, դեռևս չկային հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը և լեզվին նվիրված ֆրանսերենով ուսումնասիրությունները և հայերեն-ֆրանսերեն բառարանները:

Ֆրանսիական հայագիտության ձևավորված ավանդներն այնուհետև շարունակվելու էին Մարի Ֆելիսիտե Բրոսսեով (1802–1880թթ.) և Էդուարդ Դյուլոնիեով (1807–1881թթ.):

Բրոսսեին նվիրված գրքում (Երևան, 2002թ.) նրա հայագիտական աշխատանքները քննվում են վրացագիտության և ընդհանրապես արևելագիտական գործերի հետ որոշակի կապակցության մեջ:

Վրաստանում ըստ արժանվույն է գնահատվել նրա գործունեությունը: Անգամ պատմագեղարվեստական ստեղծագործություններ են գրվել նրան նվիրված, ուստի Դոլուխանյանի գիրքը կարևորվում է նաև որպես հայ ժողովրդի երախտագիտության արտահայ-

տություն մեծանուն գիտնականին, ում անվան հետ է կապվում Անիի գիտական ուսումնասիրության պատմության առաջին փուլը:

Բրոսսեն Էջմիածնի հռչակավոր Մատենադարանի գրացուցակը ռուսերեն և ֆրանսերեն թարգմանություններով գիտական շրջանառության մեջ է դրել:

Այսօր արդեն պատմական սկզբնաղբյուրի արժեք ունեն Բրոսսեի՝ Հայաստանի մասին նկարագրությունները և հատկապես տպավորությունները Ս. Էջմիածնից:

Ֆրանսիական հայագիտության Սեն-Մարտենի ավանդների երկրորդ շարունակողը դարձավ Էդուարդ Դյուլորիեն, ում նվիրված ուսումնասիրությունը (Երևան, 2004թ.) գրված է նույն մեկնակետով՝ ներկայացնել հայագիտական աշխատանքները, հայ ժողովրդի պատմության ու գրականության ընթացքի կատարած պարբերացումը, ցույց տալ հայ հին գրականությանը և մշակույթին նվիրված ինչ արժեքավոր բնորոշումներ ունի:

Դյուլորիեի դեպքում ևս բերվում են նրա հասարակական հնչեղություն ունեցող և հայ ժողովրդի քաղաքական իրավիճակի ու ապագայի մասին հայտնված կարծիքները:

Ժամանակագրորեն հաջորդը Վիկտոր Լանգլուան է (1829–1869թթ.), ում նվիրված է համանուն աշխատանքը (Երևան, 2003թ.):

Լանգլուան, ինչպես և Դյուլորիեն ընդգծված հետաքրքրություն են ունեցել Կիլիկիայի հանդեպ, որը թերևս բացատրվում է Ֆրանսիայի արտաքին քաղաքականությամբ:

Յուրաքանչյուր գիտնականի դեպքում հիշվում է, թե վերջինս հետազոտական ինչ նոր թեմա է քննել ֆրանսիական հայագիտության շրջանակում: Լանգլուայի համար որպես այդպիսիք նշվում են Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները և հայկական դրամագիտությունը:

Թե Լանգլուայի և թե ֆրանսիական մյուս հայագետների դեպքում Դոլուխանյանը հատուկ ներկայացնում է, թե նրանք ինչ կարծիք-

ներ են հայտնել Միխթարյան միաբանության մասին: Այդ կարծիքների մեկտեղումը Միխթարյանների գործունեության արժևորմանը նվիրված գեղեցիկ ժողովածու կարող է դառնալ:

Լավագույնս ներկայացված է Լանգլուայի՝ Կիլիկիա ուղևորությունը պատմաբանասիրական, հայագիտական և ազգագրական տեսանկյուններից: Այն պատկերում է նաև Կիլիկիայի վիճակը 19-րդ դարի երկրորդ կեսին:

Հայկական իրավունքների պաշտպանության այսօրվա հարցադրումների տեսանկյունից ևս այն կարևոր նշանակություն ունի: Ասվածը վերաբերում է հատկապես Սսի կաթողիկոսարանին, որի Կիլիկյան Աթոռին վերադարձնելու հարցն է այսօր դրված: Ֆրանսիական հայագիտության նոր փուլն են նշանավորում Ֆրեդերիկ Մակլերը և վերջինիս աշակերտ Ֆրեդերիկ Ֆեյդին, որոնց գործունեությունը նաև արտահայտվում է ի նպաստ հայ դատի քարոզչությամբ:

Մակլերի գործունեության այս կողմը ևս արտահայտվել է նրան նվիրված ուսումնասիրության մեջ (Երևան, 2011թ.):

Բանասիրության մեջ ավանդաբար տարբեր վեճեր են եղել Սեբեոսի Պատմության վերաբերյալ՝ սկսած այս երկի վերնագրից մինչև հեղինակային պատկանելության հարցերը: Դոլուխանյանը Սեբեոսի Պատմության Մակլերի թարգմանության և ուսումնասիրության վերլուծության ժամանակ անդրադառնում է սեբեոսագիտության մեջ առկա տեսակետների քննությանը:

Մակլերը կազմել է Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի ձեռագրացուցակը: Ի տարբերություն իր նախորդների՝ նա գրել է նաև նոր շրջանի հայ դասական գրողների մասին: Առանձնակի տեղ է հատկացրել Խաչատուր Աբովյանին: Առաջիններից մեկը ֆրանսիացի հայագետն է նկատել «Վերք Հայաստանի»-ի բանաստեղծական ներքին ռիթմը և էպիկական մեծ շունչը:

Գրքի վերջում որպես հավելված Դոլուխանյանը բերել է Սեբեոսից, Մխիթար Գոշից և Գրիգոր Տաթևացուց Մակլերի կատարած թարգմանությունները հայերեն զուգահեռ բնագրերով:

Շարքը ժամանակագրորեն եզրափակվում է Ֆրեդերիկ Ֆեյդիին նվիրված գրքով (Երևան, 2008): Այն կարելի է համարել եվրոպական նոր շրջանի հայագիտությանը նվիրված աշխատանք:

Ֆեյդիի «Սասնա ծռերին», հայկական հմայիլներին և ընդհանրապես հայ ժողովրդական հավատալիքներին ու բարբառներին նվիրված ուսումնասիրություններով ու արևմտահայերենի քերականության ձեռնարկով էականորեն ընդլայնվեց ֆրանսիական հայագիտության ուսումնասիրությունների շրջանակը:

Դոլուխանյանն ամփոփ ձևով և այսօրվա հայագիտության տեսանկյունից ներկայացրել է Ֆեյդիի հայտնած կարծիքները, թարգմանել «Սասնա ծռերի»՝ Ֆեյդիի կատարած 138 ծանոթագրությունները:

Նույն այս շարքում են քննված բելգիացի գիտնական Ֆելիքս Նևի հայ պատմագրությանը և հատկապես հայ եկեղեցական մատենագրությանը նվիրված ուսումնասիրությունները «Ֆելիքս Նևը և քրիստոնեական հայ մատենագրությունը» (Երևան, 2001) գրքում:

«Եվրոպացի հայագետներ» շարքի թեմատիկ ընդլայնված հանրագումարը կարելի է համարել «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (Երևան, 2005թ.) գիրքը, որում բերված են ֆրանսագիր, գերմանագիր և անգլիագիր ուսումնասիրողների կարծիքները հայոց այբուբենի մասին: Ընդ որում, ոչ թե Մաշտոցյան այբուբենին նվիրված հոդվածներ են հավաքված, այլ Դոլուխանյանը մանրակրկիտ որոնմամբ ի մի է բերել տարբեր հեղինակների հայ մատենագրությանը և հայոց պատմությանը վերաբերող հոդվածների և ուսումնասիրությունների այն հատվածները, որոնք վերաբերում են Մաշտոցին և հայոց այբուբենին:

Շատ կարևոր է գրքում առաջ քաշված այն հարցադրումը, որ հիշյալ հատվածները և բնորոշումները ճիշտ կլինի թարգմանել և առանձին գրքով տպագրել հայերեն: Ավելին, կարող ենք ասել, որ Դոլուխանյանի այս ուսումնասիրությունն ընդունելով որպես մատենագրական և աղբյուրագիտական հիմք, նրանում մատնանշված հատվածներն ի մի հավաքելով տպագրելն ըստ դրանց բնագրերի լեզվի՝ անգնահատելի նշանակություն կունենա ոչ միայն հայագիտական առումով, այլև կնպաստի մեր երկրի մշակութային հեղինակության բարձրացմանը:

Շարքի գրքերում շարունակ ընդգծվում է, որ հայ գրականությունը և հայ մշակույթը Եվրոպայի հայագետներին այն համոզումն է ներշնչել, որ հայերը, մնալով հայ մատենագրության ժառանգորդները, կպահպանեն իրենց ազգային ինքնությունը:

Կարող ենք ասել, որ նույն այս գիտակցումն է եղել և մնում է Աելիտա Դոլուխանյանի գիտական նվիրման, նրա գրած և գրելիք ուսումնասիրությունների հիմքում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ 2010-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ դառնալով հայագիտության և հասարակագիտության բաժանմունքի առաջին կին անդամը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն,
բանասիրական գիտությունների դոկտոր*

ԿՅԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Ծնվել է 1942թ. փետրվարի 14-ին: Հայրը՝ Գուրգեն Դանիելի Դոլուխանյանը, Ազիզբեկովի շրջանի (ներկայումս Վայք) կուսակցական շրջկոմի առաջին քարտուղարն էր, մայրը՝ Աղավնի Ջաքարի Սարուխանյանը, շրջկենտրոնի դպրոցի ուսմասվարը:

1949-ին ընդունվել է Երևանի Ստ. Շահումյանի անվան թիվ 1 դպրոցի առաջին դասարան:

1959-ին ավարտել է թիվ 1 դպրոցը՝ գերազանցությամբ:

1959-ին ընդունվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ պատմալեզվագրական ֆակուլտետի առաջին կուրս: Ուսման տարիներին եղել է լենինյան թոշակատու:

1964-ին ավարտել է ինստիտուտը գերազանցության դիպլոմով:

1964-ին ընդունվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ ասպիրանտուրան՝ հայ հին գրականություն մասնագիտությամբ (առկա ուսուցում):

1968-ին ավարտել է ասպիրանտուրան:

1966թ. ամուսնացել է:

1968թ. հունվարի 18-ին ծնվել է աղջիկը՝ Հասմիկ Մարտիրոսյանը:

1969թ. հունվարից մինչև 1969թ. սեպտեմբերի 1-ը եղել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ ասպիրանտուրայի վարիչը:

1969–1970թթ. եղել է ՀՊՄԻ-ի հայ գրականության ամբիոնի դասախոս:

1970–1979թթ.՝ ավագ դասախոս, ապա դոցենտ:

1972թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Ներսես Մոկացի» թեմայով:

1975թ.՝ դոցենտ ՀՊՄԻ-ի հայ գրականության ամբիոնում:

1979–1989թթ. եղել է ՀՊՄԻ մայրենի լեզվի և գրականության ֆակուլտետին առընթեր մասնագիտացված խորհրդի գիտքարտուղարը:

1986թ. հունվարի 27-ին ծնվել է թոռնուհին՝ Շուշան Խուրշուդյանը:

1989-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» թեմայով:

1990-ին ընտրվել է ՀՊՄԻ-ի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ:

1990-ին ստացել է պրոֆեսորի կոչում:

2013-ից Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է:

2010 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (գրականագիտություն) հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքում:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ

- 1) 2003թ. «Մովսես Խորենացի» մեդալ
- 2) 2012թ. ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ
- 3) 2015թ. ՀՀ Ազգային ժողովի պատվոգիր
- 4) 2017թ. ՀՀ Ազգային ժողովի պատվոգիր

ԱՅԼ ՊԱՐԳԵՎՆԵՐ

- 1) 2007թ. ՀԳՄ Գրական վաստակի համար մեդալ
- 2) 2007թ. Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Խաչատուր Աբովյան» մեդալ
- 3) 2007թ. Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալ
- 4) 2008թ. ՀԳՄ «Նիկոլ Աղբալյան» մրցանակ «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» գրքի համար
- 5) 2012թ. ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ

- 1) ՀԳՄ «Գրական թերթ»
- 2) ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես»
- 3) ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի «Գրականագիտական հանդես»
- 4) ՀՊՄՀ «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» ամսագիր
- 5) ՀՊՄՀ գիտական տեղեկագիր
- 6) ՀՊՄՀ «Հայագիտական հանդես»
- 7) «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- 1) ՀՀ նախագահի մրցանակ գրականության գծով (անդամ)
- 2) ՀՀ պետական մրցանակ գրականության գծով (անդամ)
- 3) Համաշխարհային Հայկական Կոնգրեսի, Ռուսաստանի Հայերի Միավորման, Սփյուռքի նախարարության «Գրական մրցանակաբաշխություն – 21-րդ դար» (նախագահ)
- 4) ՀՀ ԿԳ նախարարության հանրապետական օլիմպիադա գրականության գծով (5 տարի անընդմեջ նախագահ)

ԳԻՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄ

- 1) Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհրդի անդամ
- 2) ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի անդամ
- 3) Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կառավարման խորհրդի անդամ
- 4) ՀՀ մշակույթի նախարարության պետական պատվերով և աջակցությամբ հրատարակվող գրականության ցանկերը ձևավորող խորհրդի անդամ
- 5) ՀՀ մշակույթի նախարարության Գրիգոր Նարեկացու մատյանի 1000-ամյա հոբելյանի կառավարական հանձնաժողովի անդամ
- 6) Խ.Աբովյանի հիշատակին նվիրված կառավարական հանձնաժողովի անդամ

ԱՅՑԵԼԱԾ ԵՐԿՐՆԵՐ

- 1) Արխագիա – 1 այց
- 2) ԱՄՆ – 12 այց, 3 այցը՝ զեկուցումով
- 3) Անգլիա – 2 այց
- 4) Ավստրիա – 3 այց
- 5) Արգենտինա – 1 այց
- 6) Արցախ – 3 այց, 1 այցը՝ զեկուցումով
- 7) Արևմտյան Հայաստան – 2 այց
- 8) Արաբական Միացյալ Էմիրություններ – 1 այց
- 9) Բաքու, Սումգայիթ – 1 այց
- 10) Բելգիա – 1 այց
- 11) Բրազիլիա – 1 այց
- 12) Գերմանիա – 3 այց
- 13) Դանիա – 1 այց
- 14) Էստոնիա – 2 այց
- 15) Իսպանիա – 1 այց
- 16) Իտալիա – 2 այց
- 17) Լատվիա – 1 այց
- 18) Լեհաստան – 1 այց
- 19) Լիբանան – 1 այց
- 20) Կանադա – 1 այց
- 21) Կիլիկյան Հայաստան – 1 այց
- 22) Կուբա – 1 այց
- 23) Հոլանդիա – 1 այց
- 24) Հունաստան – 1 այց
- 25) Հունգարիա – 1 այց
- 26) Մեքսիկա – 3 այց
- 27) Նորվեգիա – 1 այց
- 28) Շվեդիա – 1 այց

- 29) Չեխիա – 1 այց
- 30) Ռուսաստան – 20 այց
- 31) Վրաստան – 7 այց, 2 այցը՝ զեկուցումով
- 32) Սիրիա – 1 այց
- 33) Ուկրաինա – 2 այց
- 34) Ուրուգվայ – 1 այց
- 35) Ֆրանսիա – 1 այց՝ զեկուցումով

Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2000

Իսկանդարյան Նաիրա: Բանահյուսական նյութերը 16–18-րդ դարերի ձեռագիր մատյաններում

2002

Առաքելյան Ռուզան: Չարլզ Դաուսերը հայագետ

Տողանյան Նաիրա: Հայ հին և միջնադարյան գրականության ուսուցումը ավագ դպրոցում

2003

Գասպարյան Մհեր: Գրականության տեսության ուսուցումը կրթական դպրոցի միջին և ավագ դասարաններում

Սահակյան Պարույր: Ֆրեդերիկ Կոնիբերը հայագետ

2004

Հովսեփյան Լիլիթ: Աստվածաշնչի «Երգ երգոց» գրքի միջնադարյան հայկական մեկնությունները (թարգմանական և ինքնուրույն, Ե–ԺԵ դարեր)

2007

Սարգսյան Նելլի: Մկրտիչ Էմինը հայագետ

2008

Մինասյան Թամարա: Գրիգոր Սկևռացի. կյանքը և գործը

2009

Դավթյան Սուսաննա: Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ուսուցումը դպրոցում

2010

Թամամյան Նաիրա: Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» երկը որպէս գրական ստեղծագործություն

2011

Մարդյան Գայանե: Հովհաննես Թումանյանի ստեղծագործության ուսուցումը դպրոցում

2012

Հարությունյան Անահիտ: Նորայր Աղայանի ստեղծագործությունը

2013

Հովսեփյան Մերի: «Տաղարան» ժողովածուները հայ միջնադարյան ձեռագրերում

**ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ**

1990

Մեսրոպյան Սեդա: Տեսիլի ժանրը 5-11-րդ դարերի հայ մատենագրության մեջ

1992

Սաֆարյան Վազգեն: Կիլիկյան Հայաստանի գրականությունը (դոկտորական)

1993

Բարսեղյան Բելլա: Լեհահայության մշակութային կյանքը և գրականությունը (դոկտորական)

Մկրտչյան Հասմիկ: Արաբական գեղարվեստական արձակի նշումների հայ միջնադարյան թարգմանությունները (10-14-րդ դարեր)

1996

Գրիգորյան Ռոզա: Հայ մանկական բանահյուսությունը

2000

Պետրոսյան Արմեն: Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը (դոկտորական)

2001

Թոփչյան Արամ: Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը

2002

Գրիգորյան Շավիղ: Հայ աշուղական գրականության պատմություն (Դրվագներ) (դոկտորական)

2003

Սեֆերյան Սոնա: Շեքսպիրը և հայ թարգմանական արվեստը (դոկտորական)

2004

Բռնհեննաիեկեր-Զաքարյան Անահիտ: Հայ հին գրականությունը «Բազմավեպի» էջերում

2005

Մենենշյան Անահիտ: “Le Monde”-ը և հայ իրականությունը

2007

Եղիազարյան Վանո: Հայրեններ (դոկտորական)

2008

Կարապետյան Լյուդվիգ: Հայ մանկապատանեկան գրականության ակունքներն ու զարգացման փուլերը (դոկտորական)

2009

Կորկոտյան Այծեմիկ: Հայ գիրքը և տպագրական գործը Իրանում 17-րդ դարում (Խաչատուր վարդապետ Կեսարացի)

2011

Ալլահվերդյան Սիլվա: Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» և Ջալալ Էդրիին Ռումիի «Մասնավի Մանավի» գրքերի համեմատական քննությունը

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1987

Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ-
Երևան: ԵՊՀ հրատ., 1987.- 232 էջ:

Հրատարակության է ներկայացրել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Գրախոս` Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոն:

Բովանդ.՝ Նախարան

Ներածություն

ա) Հայ միջնադարյան քնարերգության փիլիսոփայական նախահիմքերը

բ) Հայ փիլիսոփայական միտքը հոգու և մարմնի խնդիրների մեկնակետում

գ) Միջնադարի հայ քնարերգության կրոնա-դիցաբանական, հեթանոսական նախահիմքերը

Գլուխ առաջին. Հոգու և մարմնի խնդիրները հայ քնարերգության ակունքներից մինչև Գրիգոր Նարեկացի:

ա) Հեթանոսական շրջան

բ) Հոգու և մարմնի խնդիրները միջնադարյան հայ քնարերգության նախանարեկյան շրջանում

գ) Գրիգոր Նարեկացու քնարերգությունը հոգու և մարմնի խնդիրների դիտակետից

Գլուխ երկրորդ. Հետնարեկյան քնարերգությունը հոգու և մարմնի խնդիրների դիտակետից (11-14-րդ դարեր):

Գլուխ երրորդ. Հոգու և մարմնի պրոբլեմը վիճաբանական քերթվածներում:

Գլուխ չորրորդ. Հոգու և մարմնի պրոբլեմը աշխարհականացման տենդենցի ուժեղացման պայմաններում (15-18-րդ դարեր):

Ամփոփում

Քեչոմե

Օգտագործված գրականություն

Բովանդակություն

Գրախոս.՝ Ամիրջանյան Սուսաննա: Հայ քնարերգության միջնա-
այունը: (Ա. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարյան հայ
քնարերգության մեջ» ուսումնասիրության մասին) //Գրքերի աշխարհ.-
Երևան, 1988.- թ. 3.- 27 մարտի.- էջ 4:

Գրախոս.՝ Ղազինյան Ա.: Ա. Գ. Դոլուխանյան, Հոգու և մարմնի պրոբ-
լեմը միջնադարի հայ քնարերգության մեջ, Երևանի համալսարանի հրա-
տարակչություն, 1987, 230 էջ //Լրաբեր հասարակական գիտությունների.-
Երևան, 1988.- թ. 8.- էջ 88-91:

1999

Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը /Խմբագիր՝ Մ. Գիլավյան;
նկարիչ՝ Լ. Ներսիսյան.- Երևան: «Կյորես» հրատ., 1999.- 56 էջ; լուսանկար:

Գիրքը տպագրված է «Կյորես» հայրենակցական միության նախա-
ձեռնությամբ և հովանավորությամբ:

Բովանդ.՝ *Մուտք*

Նախաբան

Առաջին հայտնությունը հայրենիքում

Նամակ առ Հայաստան

Խորան

Ջրույցներ Աստծու հետ

Անդենական զրույցներ

Միրո մեկ ու կես հազարամյակը

Գրախոս.՝ Ադայան Նորայր: Գիրք Ալիսիայի մասին //Հայաստանի
Հանրապետություն.- Երևան, 1999.- թ. 202.- 16 հոկտեմբերի.- էջ 5:

Գրախոս.՝ Սրայյան Հակոբ: Ալիսիա Կիրակոսյանի քնարերգու-
թյունը //Հայաստան.- Երևան, 1999.- թ. 92.- 4 օգոստոսի.- էջ 4:

2001

Տեղիքս Ներ և հայ քրիստոնեական մատենագրությունը /Խմբագիր՝ Սուրեն Սահակյան.- Երևան: «Արտագերս» հրատ., 2001.- 93 էջ:

Բնագրից առաջ՝ «Գիրքն անսահման սիրով և երախտագիտությամբ նվիրվում է բոլոր օտարազգի հայագետներին՝ անցյալի, ներկայի և ապագայի»:

Բովանդ.՝ Երկու խոսք

Preface

Avant-propos

Два слова

Ներածություն

Քրիստոնյա Հայաստանը և նրա մատենագրությունը

ա) Հայ մատենագրության ընդհանուր նկարագիրը, լեզուն և այբուբենը

բ) Ազգային առաջին գրողներն ու հին թարգմանիչները: Գրականության վերածնունդը խաչակիրների ժամանակաշրջանում

գ) Հայագիտական նոր կենտրոններ ժամանակակից դարերում և Եվրոպան

դ) Հայ օրհներգը, շարականը: Սուրբ Հովհաննիսի և նրա հավատակիցների լեզենդը, Վարդանանց և նրա զինակիցներին նվիրված շարականը

ե) Ներսես Շնորհալի կաթողիկոսը որպես գրող

զ) Հայոց պատմագրության հիմնական հուշարձանները

է) Եղիշեն 5-րդ դարի պատմիչ

ը) Հովհաննես Վեցերորդ կաթողիկոսը և նրա «Հայոց պատմությունը»: Հովհաննես Դրասխանակերտցու ժամանակաշրջանը և նրա երկի ոճը: Հովհաննես Դրասխանակերտցին հայոց հին պատմության մասին: Մանրամասներ Բագրատունիների թագավորության և իրեն ժամանակակից իշխանների մասին: Հովհաննես Վեցերորդը Հայաստանի քրիստոնեության պատմիչ

թ) Մատթեոս Եղեսացու ժամանակագրությունը: Մատթեոս Եղեսացին և նրա առնչությունը առաջին խաչակրաց արշավանքի հետ: Գողթնություն

դը Բույնի նշանավոր գործերը: Պաղտին Առաջինը և նրա հաջորդները Երուսաղեմի գահի վրա

ժ) Հայկական աղբյուրները մոնղոլների պատմության մասին մինչև Թովմա Մեծոփեցու Պատմությունը (XIII-XV դդ.)

ժա) Գրիգոր Նարեկացին Ֆելիքս Նևի գնահատմամբ

4) Ֆ. Նևի աշխատությունը՝ նվիրված Թովմա Մեծոփեցուն:

5) Հայ գրականության մի քանի արժանահիշատակ հրապարակումներ:

Վերջաբան

Ծանոթագրություններ

Բովանդակություն

Գրախոս.՝ Պետրոսյան Թևոս: Ֆելիքս Նևը և Հայաստանը //Գրական թերթ.- Երևան, 2002.- թ. 2.- 25 հունվարի.- էջ 3:

Գրախոս.՝ Պետրոսյան Նորիկ: Աելիտա Դոլուխանյանի «Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական մատենագիտությունը» գիրքը //Հայաստանի կոմունիստ.- Երևան, 2001.- թ. 21.- 12-19 հունիսի.- էջ 4:

Բրիտանական թանգարանի մի սխալի մասին //Հայրենիքի ձայն.- Երևան, 1987.- թ. 9.- 25 փետրվարի.- էջ 5-6:

1997

Տարաշխարհիկ տպավորության բեկորներ: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 1997.- թ. 24.- 24 հունիսի.- էջ 7:

2005

Ինչպիսին տեսա գրադարանը Տորոնտոյում: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2005.- թ. 31.- 16 սեպտեմբերի.- էջ 1:

2008

Ուխտագնացություն դեպի Արևմտահայաստան //Գրական թերթ.- Երևան, 2008.- թ. 29.- 5 սեպտեմբերի.- էջ 4; Յառաջ.- Փարիզ, 2009.- թ. 9.- 17-18, 20 հունվարի.- էջ 7:

2009

Մեքսիկայում ազգային դրոշը սրբություն է: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2009.- թ. 32.- 2 հոկտեմբերի.- էջ 7-8:

Նոր նկատում Լոնդոնի Բրիտանական թանգարանում: [17-րդ դարի Իրանի քարտեզի վրա Մեծ Հայքի և նրա մեջ մտնող ներկայիս Հայաստանի ու Արցախի վրա գրված «Հայեր» բառի մասին: Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2009.- թ. 9.- 27 մարտի.- էջ 1:

2010

Հունաստանի պատմական հուշարձաններն այսօր: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2010.- թ. 12.- 16 ապրիլի.- էջ 7:

Տեսա երկիրն իմ Կիլիկիա: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2010.- թ. 28.- 3 սեպտեմբերի.- էջ 4; Մանկավարժական համալսարան.- 2010.- թ. 7.- Սեպտեմբեր.- էջ 6-7; Գրականագիտական հանդես.- Երևան, 2010-2011.- թ. ԺԱ-ԺԲ.- էջ 292-299:

2011

Մշակութային հայացք Վիեննայի, Զալցբուրգի և Պրահայի վրա: [Ուղեգրություն] //Գրական թերթ.-Երևան, 2011.- թ. 1.- 28 հունվարի.- էջ 3, 8; Մանկավարժական համալսարան.- Երևան, 2011.- թ. 1.- էջ 1, 5:

2012

Այդ զարմանահրաշ Դուբայն ու Աբու Դաբին: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2012.- թ. 20.- 8 հունիսի.- էջ 6:

Կալիֆորնիան իր տեսարժան վայրերով: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2012.- թ. 1.- 27 հունվարի.- էջ 7:

Հունգարիայի կառավարությունն ունի խոսքի ու գործի խոր հակասություն: [Ուղեգրություն] //Գրական թերթ.- Երևան, 2012.- թ. 42.- 14 դեկտեմբերի.- էջ 2:

Նորից Մեքսիկայում՝ մայաների երկրում: Ուղեգրություն //Գրական թերթ.- Երևան, 2014.- թ. 14.- 2 մայիսի.- էջ 7-8:

2015

Նորից Բեռլինում՝ 44 տարի անց //Գրական թերթ.- Երևան, 2015.- թ. 30.- 18 սեպտեմբերի.- էջ 7:

Արգենտինյան տպավորություններ //Գրական թերթ.- Երևան, 2015.- թ. 34.- 16 հոկտեմբերի.- էջ 3:

Ռիո դե Ժանեյրոն մոլի ֆուտբոլասերների քաղաք է //Գրական թերթ: Հավելված.- Երևան, 2015.- թ.- 43.- 18 դեկտեմբերի.- էջ 4:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

1997

Հայրենիքի նկատմամբ սերը սկսվում է գրականությունից /Հարցազրույցը վարեց Տիգրան Նիկողոսյանը //Հայաստան.- Երևան, 1997.- թ. 8.- 23 հունվարի.- էջ 4:

2000

Ցանկանում եմ մեր մայրաքաղաք Երևանը միշտ տեսնել լույսերի ու լուսավոր ժպիտների մեջ, երազում եմ տեսնել հայ հոգևոր կյանքի վերածնունդը: (Դեպի 21-րդ դար ինչո՞վ և ինչպե՞ս) //Հայաստան.- Երևան, 2000.- թ. 79.- 19 հոկտեմբերի.- էջ 2:

2005

«Եթե որևէ մեկը տառապում է ազգային սնապարծությամբ, նա ապագա չունի»,- ասում է Ա. Դոլուխանյանը /Հարցազրույցը վարեց Հակոբ Սրայյանը //Հայաստան.- Երևան, 2005.- թ. 7.- 1-15 հունվարի.- էջ 2:

Մանկական գրականությունը երեկ և այսօր: «Գրական թերթի» հարցերին պատասխանում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը //Գրական թերթ.- Երևան, 2005.- թ. 12.- 1 ապրիլի.- էջ 4:

2006

Գրականագետները գրական մամուլի մասին /Աելիտա Դոլուխանյան, Ավիկ Իսահակյան, Քրիստինե Հովհաննիսյան //Գրական թերթ.- Երևան, 2006.- թ. 3.- 3 փետրվարի.- էջ 2:

«Մենք իրավունք չունենք կորցնելու մեր ազգային նկարագիրը» /Հարցազրույցը վարեց Կարինե Հարությունյանը //Չորրորդ իշխանություն.- Երևան, 2006.- թ. 550.- 31 մարտի.- էջ 7:

2009

Հայ կինը միշտ էլ ազգի մեծագույն նվիրյալն է: [Գրականագետ, բանագետ Վերժինե Սվազյանի հետ հարցազրույցը վարեց] /Աելիտա Ղուլոխանյանը //Գրական թերթ.- Երևան, 2009.- թ. 4.- 20 փետրվարի.- էջ 4:

«Մեր մեջ հիմա վատն այն է, որ նախանձ կա...» /Հարցազրույցը կրթադաստիարակչական թեմաներով վարեց Լուսինե Թոփուզյանը //Փակագիծ.- Երևան, 2009.- թ. 54.- 24 մարտի.- էջ 6:

2011

“Главное-светлый взгляд в будущее” /Հարցազրույցը վարեց Սվետլանա Ավազյանը //Эфир.- Ереван, 2011.- N 19.- 12 мая.- с. 18.

2012

«Ցանկանում եմ, որ հայ կանայք պահեն իրենց հոգու և մարմնի գեղեցկությունը, որովհետև նրանք մարդու լավ տեսակն են» /Զրույցը վարեց Կարինե Ռաֆայելյանը //Իրատես de facto.- Երևան, 2012.- թ. 20.- 23-26 մարտի.- էջ 8-9:

2015

Կլոր սեղան: Գրականագետները գրականության մասին /Հարցազրույցը վարեց Կարինե Խոդիկյանը //Գրական թերթ.- Երևան, 2015.- թ. 6-7.- 12 մարտի.- էջ 6-9:

2016

Այնպիսի գործեր պետք է ստեղծվեն, որոնցում չանտեսվի մեր ազգայինը: Հարցազրույց //Առավոտ: Էլեկտրոնային տարբերակ.- Երևան, 2016.- 31 հունվարի:

Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԸ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ

2000

Նոր անուններ: Աելիտա Գուրգենի Դոլուխանյան: [Համառոտ կենսագրական և տպագրված աշխատությունների ցանկը] //Աստղիկ.- Երևան: Սահակ Պարթև, 2000.- թ. 9-10.- էջ 292:

2004

Մխիթարյան Սարգիս: Աելիտա Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետներ» շարքի երեք գրքերը //Գրական թերթ.- Երևան, 2004.- թ. 10.- 16 ապրիլի.- էջ 4:

2005

2005 թ. մայիսի 20-21-ին տեղի ունեցավ Հայաստանի գրողների միության 14-րդ համագումարը: ՀԳՄ վարչության կազմը /Աելիտա Դոլուխանյան և ուրիշներ //Գրական թերթ.- Երևան, 2005.- թ. 20.- 27 մայիսի.- էջ 2:

Մխիթարյան Սարգիս: Սրբագործված նախնիներ: (Ա. Դոլուխանյանի «Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» և «Էդուարդ Դյուլորին և հայագետ» գրքերի վերլուծություն) //Գրական թերթ.- Երևան, 2005.- թ. 23.- 17 հունիսի.- էջ 6:

Քննարկում՝ նվիրված արդի հայ արձակին: [Սերգեյ Սարինյանի «Ժամանակը և գրականության ընթացքը» հոդվածի շուրջ ՀԳՄ դահլիճում տեղի ունեցած քննարկմանը նաև Աելիտա Դոլուխանյանի մասնակցության մասին] //Գրական թերթ.- Երևան, 2005.- թ. 9.- 11 մարտի.- էջ 3:

Аэлита. [Портрет] //Евразия.- Москва, 2005.- N 39.- Июль.- с. 47:

2006

Այլիտա Դոլուխանեան: [Համառոտ կենսագրական] //Շիրակ.- Պէրուր, 2006.- Յուլիս-Օգոստ.-Սեպտ.- էջ 47:

Անանյան Քրիստինե: Վստահությամբ նայել ապագային: Գրողների այցը «Զատիկ» մանկատուն: (Նորայր Աղայան, Աելիտա Դոլուխանյան, Ռուզան Ասատրյան) //Գրական թերթ.- Երևան, 2006.- թ. 45.- 22 դեկտեմբերի.- էջ 1:

Գևորգյան Գոհար: «Մեր լեզուն վտանգված և անտեսված է պետականորեն»: Արհամարհված մայրենիի համար լեզվաբանները գտնվում են զայրույթի կիզակետում: (ՀԳՄ-ում կազմակերպված կլոր սեղանի մասնակիցներ Ռոբերտ Դավթյանի, Լևոն Եզեկյանի, Աելիտա Դոլուխանյանի, Լավրենտի Միրզոյանի, Վիկտոր Մարտիրոսյանի կարծիքների մասին) //Ազգ.- Երևան, 2006.- թ. 34.- 24 փետրվարի.- էջ 6:

2007

Աղայան Նորայր: Ոչ հոբելյանական խոսք: (Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Դոլուխանյանի ծննդյան 65-ամյակի առթիվ) //Գրական թերթ.- Երևան, 2007.- թ. 4.- 16 փետրվարի.- էջ 7:

Աղամյան Հրանտ, Հովհաննիսյան Յուրի: Գրականության նվիրյալը մանկավարժականից: (Գրականագետ Ա. Դոլուխանյանի ծննդյան 65 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակների առթիվ) //Հայաստան.- Երևան, 2007.- թ. 9.- 16 մարտի.- էջ 5:

Ասրյան Միլվա: «Հավաքողներ կան թրթիռը սրտի...»: [ՀԳՄ-ում Ֆելիքս Բախչինյանի «Տիեզերքի սիրեցյալները» գրքի շնորհանդեսի ժամանակ Աելիտա Դոլուխանյանի արտահայտած կարծիքի մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 2.- 7 մարտի.- էջ 7:

Ասրյան Միլվա: «Սեղձ՝ նվազ, ճերմակդ՝ շատ»: [«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում Ռոպեր Հատտեճյանի հետ կայացած հանդիպմանը Աելիտա Դոլուխանյանի մասնակցության մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 7.- 15 հունիսի.- էջ 4:

Արժանացավ Նանսենի հուշամեդալի: (Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Դոլուխանյանի պարգևատրման մասին) //Հայաստանի Հանրապետություն.- Երևան, 2007.- թ. 90.- 15 մայիսի.- էջ 3:

Գիլավյան Մարտին: Մեր Աելիտան: (Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Դոլուխանյանի գիտամանկավարժական գործունեության ընդհանուր պատկերը) //Կրթություն.- Երևան, 2007.- թ. 8.- 28 փետրվարի.- էջ 5:

Զատիկյան Հովհաննես: Արժանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու: [Ժողովածուում ներառված հոդվածների, նաև Աելիտա Դոլուխանյանի հոդվածի մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 3.- 14 ապրիլի.- էջ 5:

Համալսարանի խորհրդի նիստում: [Խ. Արժանի անվան ՀՊՄՀ 2007թ. խորհրդի նիստում Ա. Դոլուխանյանի և ուրիշների արտահայտած կարծիքի մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 1.- 31 հունվարի.- էջ 1:

Միրվաճ դասախոսն ու գիտնականը: [Ա. Դոլուխանյանի ծննդյան 65 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակի առթիվ] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 2.- 7 մարտի.- էջ 3:

Վարդույան Լիլիթ: Հանդիպում բանաստեղծի հետ: [«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում Հովհ. Գրիգորյանին նվիրված միջոցառման ժամանակ Աելիտա Դոլուխանյանի զեկուցման մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 4.- 15 մայիսի.- էջ 7:

Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալ Աելիտա Դոլուխանյանին //Գրական թերթ.- Երևան, 2007.- թ. 16.- 11 մայիսի.- էջ 2:

Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալ Աելիտա Դոլուխանյանին //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2007.- թ. 4.- 15 մայիսի.- էջ 7:

2008

Կառավարման խորհրդի նիստում [նաև Աելիտա Դոլուխանյանի ելույթի մասին] //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2008.- թ. 1.- Հունվար.- էջ 2:

ՀԳՄ ամենամյա մրցանակի դափնեկիրները՝ Աելիտա Դոլուխանյան և ուրիշներ //Գրական թերթ.- Երևան, 2008.- թ. 45.- 26 դեկտեմբերի.- էջ 1:

2009

Ներսիսյան Ներսես ավագ քահանա: Հայաստանը Բրիտանական թանգարանում: (Անդրադարձ Ա. Դոլուխանյանի «Նոր նկատում Լոնդոնի Բրիտանական թանգարանում» հոդվածին) //Քրիստոնյա Հայաստան.- Երևան, 2009.- թ. 20.- Հոկտեմբեր Բ.- էջ 7:

2010

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստում համալսարանի ռեկտոր Ռ. Միրզախանյանը շնորհավորեց պրոֆեսոր Ա. Դոլուխանյանին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրվելու կապակցությամբ //Մանկավարժական համալսարան.- Երևան, 2010.- թ. 10.- էջ 2:

Պարզևների հանձնման արարողություն: (Մայրենիի օրվա առիթով ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրի է արժանացել նաև Ա. Դոլուխանյանը) //Կրթություն.- Երևան, 2010.- թ. 9-10.- 3 մայիսի.- էջ 3:

Баранов Юрий. Вечный вопрос //Литературная газета.- Ереван, 2010.- N 13.- 7-13 апреля.- с. 11.

2011

Շնորհավորում ենք [Աելիտա Դոլուխանյանին՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրվելու կապակցությամբ] //Գրական թերթ.- Երևան, 2011.- թ. 1.- 28 հունվարի.- էջ 1:

2012

Աղայյան Նորայր: Հայագիտության նվիրյալը: (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ) // Պատմաբանասիրական հանդես.- Երևան, 2012.- թ. 1.- էջ 264-269:

Զաքարյան Անուշավան: Անվանի հայագետն ու վաստակաշատ մանկավարժը: (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակի առթիվ) // Գիտություն.- Երևան, 2012.- թ. 2.- էջ 4:

Զաքարյան Անուշավան: Հանրաճանաչ հայագետ-մանկավարժը: (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ) // Լրաբեր հասարակական գիտությունների.- Երևան, 2012.- թ. 1.- էջ 358-364:

Ուսուցիչ ծնվում են: [«Գիրք դպրոցներին» ծրագրի շրջանակում գրականագետ Աելիտա Դոլուխանյանի «Հայ գրականության դասավանդման արդիական խնդիրները» թեմայով դասախոսության մասին] // Գրական թերթ.- Երևան, 2012.- թ. 6.- 2 մարտի.- էջ 1:

2016

Ամենակարդացված հեղինակներ, Գրքերը պահանջվել են ավելի քան 13.500 անգամ, Աելիտա Դոլուխանյան (Տիգրան Պետրոսյանց, 2016 թվականի լավագույն ընթերցող, Հեղինակային հրատ., Երևան, 2016, էջ 24):

Ասրյան Միլվա: «Թերթը ծառայում է գրական մտածողության զարգացմանը»: [ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում «Գրական թերթի» աշխատակազմի հետ հանդիպման և պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի խոսքի մասին] // Մանկավարժական համալսարան.- Երևան, 2016.- թ. 3.- 30 մարտի.- էջ 6:

2017

Սահակյան Գալուստ: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ տիկին Աելիտա Դոլուխանյանին [շնորհավորանքի

խոսք ՀՀ ԱԾ նախագահի կողմից ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Միլիտոնյան Էդվարդ: [Շնորհավորանքի խոսք Աելիտա Դոլուխանյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Ադայան Նորայր: Վերնագիրը վերջում: [Շնորհավորանքի խոսք Աելիտա Դոլուխանյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Դերիկյան Վարդան: Հայագիտության միջազգային հնչեղությամբ: [Շնորհավորանքի խոսք Աելիտա Դոլուխանյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Կոսյան Սամվել: Միշտ հետևողական ու սկզբունքային: [Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

ՀԳՄ վարչությունը շնորհավորում է [Աելիտա Դոլուխանյանին ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Սարգսյան Լիպարիտ: [Շնորհավորանքի խոսք Աելիտա Դոլուխանյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 3.- 17 փետրվարի.- էջ 3:

Մերժ Սարգսյան: ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գրականագետ Աելիտա Դոլուխանյանին [շնորհավորանքի հեռագիր ՀՀ նախագահի կողմից ծննդյան 75-ամյակի առթիվ] //Գրական թերթ.- Երևան, 2017.- թ. 4.- 24 փետրվարի.- էջ 2:

Անուշավան Զաքարյան: Վաստակաշատ հայագետն ու մանկավարժը: (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ) //Գիտություն.- Երևան, 2017.- թ. 3.- Մարտ.- էջ 6:

ՀՈՒՆՏԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԵՐ

Այսօրվա ազնվական հայ կնոջ տիպար է Աելիտա Դոլուխանյանը: Շնորհներով հարուստ նրա գրականագիտական հայացքն ընդգրկում է դասական և ժամանակակից գրականության լավագույն էջերը: Ջարմանում էս, թե ինչպես է հասցնում այդքանը. սա էլ մի անուրանալի շնորհ է, որ նրան պահում է միշտ գեղեցիկ, ներկայանալի և տաղանդավոր:

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՀԳՄ նախագահ

ՄԵԾ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՈՒ ԷՐՈՒԴԻՑԻԱՅԻ ՏԵՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ինչպիսի արագությամբ են անցնում ժամանակները, և որքան մեծանում էս, այդ ընթացքն ավելի է ուժեղանում, ավա՛ղ: Կարծես երեկ էր (ոչ թե 1960-ականները), երբ Մատենադարանի հայագիտական սրահում հայտնվեց բարեկազմ ու գեղեցկատես մի աղջնակ: Նա գրավեց մեր ուշադրությունը: Պարզվեց՝ աղջնակը մանկավարժական ինստիտուտը գերազանցությամբ ավարտած Աելիտա Դոլուխանյանն է, մեծահամբավ բանասեր, հմուտ մատենագետ Ասատուր Մնացականյանի ասպիրանտը:

Նրա աշխատասիրությունը բոլորիս զարմացնում էր: Ճիշտ ժամերին նստած էր աշխատասեղանի մոտ՝ խրված ձեռագիր-մատյանների ու գրքերի մեջ: Դա կարծես հակառակ էր նրա կենսակերպին՝ բարեկեցիկ ընտանիքում ապրած ու փայփայված նուրբ էակ, և հանկարծ դարերի փոշին վրան կաշվե մետաղածածկ ծանր մատյաններ, ինչ ասես, երբ նրա հոգին դրանց մեջ էր փնտրում գեղեցիկը: Վստահ կարող եմ ասել, որ Աելիտա Դոլուխանյանի՝ որպես մարդու և գիտնականի կայացման հիմքը հենց այս սուրբ օջախում դրվեց: Մատենադարանը, մանավանդ 60-80-ականներին, կարծես ժամանակի գիտության նշանավորների օրրան էր դարձել. Աշոտ Հովհաննիսյան,

Կարապետ Մելիք-Օհանջանյան, Լևոն Խաչիկյան, Արամ Ղանալանյան, Ասատուր Մնացականյան, Սեն Արնշատյան... Մատենադարանի սրահներում էր աշխատում հայ գրականագիտության երախտավորների միջին սերունդը՝ Սերգեյ Սարինյան, Մայիս Ավդալբեգյան, Շուշանիկ Նազարյան, Արմենուհի Սրապյան, Պողոս Խաչատրյան, Արշալույս Ղազինյան. երևելի այս միջավայրի հոգեհարազատ ծնունդը դարձավ մեր Աելիտան, որն այսօր լավագույն շարունակողն է այդ մեծաշնորհ մարդկանց գործի, ամենափայլունը թերևս: Հազար անգամ ճիշտ էր ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, երբ դեռ այն տարիներին, նայելով աշխատասեղանին կպած Աելիտային, ասաց. «Էս աղջիկը իսկական գիտնական է լինելու, կտեսնե՛ք», ու եղավ, տեսանք, ավստ՛ ս այդ մեծերը չկան:

Արդեն այդ տարիներին Ա.Դուրխանյանի տքնաջան պրպտումների արդյունքն իրեն երկար սպասեցնել չտվեց: 1975-ին, ապա նաև 85-ին և 2009-ին աշխարհ եկան Ներսես Մոկացուն նվիրված մեծարժեք գրքերը, 1988-ին՝ Խաչատուր Կեչառեցու բանաստեղծությունների նորացված գիրքը: Այնուհետև բացառիկ բեղմնավոր գործունեության տարիներ միջնադարյան, նոր և ժամանակակից գրականության բազմաբնույթ ոլորտում. «Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը», «Դրվագներ հայ գրականության մտքի պատմությունից», «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Հայ գրականության տեսություն», «Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը», «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» և այլն:

Ի տարբերություն շատերի՝ Աելիտան ուներ մի մեծ առավելություն, որի շնորհիվ համարձակորեն (և շահեկանորեն) մուտք էր գործում գիտահետազոտական անսովոր լայն դաշտ: Դա մի քանի լեզուների տիրապետելն էր, որոշ աշխատություններ բնօրինակով կարդալը: Առանց այդ որակների դժվար թե հնարավոր լիներ եվրոպացի հայագետներին պատշաճ ներկայացնելը. Ֆելիքս Նև, Մարի Ֆելիստե Բրոսսե, Էդուարդ Դյուլորիե, Վիկտոր Լանգլուա, Ֆրեդերիկ Ֆելդի, Սեն-Մարտեն, Ֆրեդերիկ Մակլեր: Աելիտա Դուրխանյանը

բնագրից թարգմանել է Պ.Ռոնսարի, Թալի դը Մուլենի, Մ.Քոզեմի, Ջ.Քոլինզի, Ռ.Դոմենթի ստեղծագործություններից: Չեմ պատկերացնում՝ երբ է հասցնում այդ բոլորը. մի՞թե Աստծո տված 24 ժամը նա դարձրել է 48. ուրիշ ի՞նչ կերպ բացատրեմ: Այս բոլորին ավելացնենք նրա մանկավարժական ծանրաբեռնված գործունեությունը՝ 1990-ից Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դասախոսությունները, մասնակցությունը հանրապետական ու միջազգային գիտաժողովների՝ եվրոպական երկրներ, ԱՄՆ: Ապա նրա ստեղծած տեսանյութերը, հաղորդումները, բազմաթիվ հրապարակումները մամուլում ամենատարբեր թեմաներով: Նա այսօր էլ Կառավարման խորհրդի անդամ է, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, ՀՀ պետական մրցանակի հանձնաժողովի անդամ, թերթերի ու հանդեսների խմբագրական կազմի անդամ: Աելիտա Դոլուխանյանը հումանիտար և հայագիտության բաժանմունքի առաջին կինն է, որ ընտրվել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Ինձ՝ Աելիտային 50-ից ավելի տարիներ ճանաչող գործընկերոջ համար, մեծապես ուրախացնում է այն, որ այսօր էլ եռանդով և ավյունով լեցուն ընկերուհին՝ բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսորը, բազմաթիվ շքանշանների ու մեդալների ասպետը, առաջվա նման պարզ ու հասարակ, հնարավոր ազատ ժամերին գալիս է իր բարի Մատենադարանը և նստում աշխատասեղանին:

Աստված Քեզ հետ, մեր սիրելի՛ Աելիտա, ի նպաստ մեր մշակույթի:

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՒԹՅԱՆ

*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
ՀՀ պետական մրցանակի դափնեկիր*

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

*(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի
ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Աելիտա Դոլուխանյանի կենսամատենագիտությունը կարող է մի ամբողջ գիրք դառնալ և լավագույնս բնութագրել նրան իբրև գրականագետի, բանասերի, դասախոսի, ուսումնական ընթացքի կազմակերպչի, հայ գրական կյանքի ակտիվ մասնակիցներից մեկի, մի մարդու, որն անհրաժեշտորեն կոչված է հենց այս ասպարեզների համար: Մրանցից յուրաքանչյուրում նա դրսևորվել է լիաձայն ու նպատակադրված՝ փորձելով պատասխանել թե՛ գիտական և թե՛ լուսավորչական կարևորագույն խնդիրների, մինչև իսկ իր գլխավոր՝ հայ միջնադարյան գրականության վերլուծաբանության ասպարեզում է նա հետևում արդիականության պահանջներին՝ գրական անցյալի ու պատմության արդիականությունը: Անցյալ-ներկա առնչություններն անբաժան են Դոլուխանյանի գիտական հետաքրքրությունից, իր յուրաքանչյուր աշխատանքում նա ցույց է տալիս հնի ու նորի էական կապվածությունը, դրանք փոխներթափանցված են, տարբեր ժամանակները նույն հոսող գետն են, թվականներն են փոխվում, մենք գտնվում ենք միևնույն, մեր դեպքում ժայռոտ ափերով գետի մեջ, որ մեր միասնական մշակույթն է:

1987 թ. Դոլուխանյանը լույս ընծայեց «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունը, կարևորագույն մի խնդիր, որը մինչ այդ մեզանում ոչ ոք չէր քննարկել: 2008-ին գիրքը տպագրվեց ռուսերեն և մոսկովյան «Լիտերատուրնայա գազետայում» արժանացավ ռուս մասնագետի բարձր գնահատականին: Գրքի և նրա հեղինակի արժևորմամբ հանդես եկան մեր երախտավորներ Արշալույս Ղազինյանը, Պողոս Խաչատրյանը, այլք, հայոց ակադեմիայի գիտական պարբերականները: Այս երկի շնորհիվ հեղինակը կանգնեց բանասիրականների նոր սերնդի լավա-

գույն ներկայացուցիչների շարքում՝ իր եռանդուն ու անշփոթելի ներկայությամբ:

Գրող կարելի է դառնալ և ինքնակրթությամբ, այսպես կոչված, կյանքի համալսարանների միջանցքներն անցնելով, թեև, կարծում եմ, ինքնաբավ որակներով սովորաբար հնարավոր չէ շատ բարձր և հեռու թռչել՝ առանձին հաջողված օրինակները դեռ օրենք և օրինաչափություն չեն, այնինչ գիտնականը պիտի դպրոց անցնի, և լուրջ դպրոց, իրենից հասուն դառնա, իրենով դպրոց բովանդակավորի ոչ ավելի և ոչ պակաս ակադեմիական մակարդակով, և այն գրողներն ու արվեստագետները, որոնց թևերը կոչված են թռչելու, յուրահատուկ ակադեմիա են և ճշմարտություն են ուսուցանում, իմաստություն ու խրատ: Ա. Դոլուխանյանը ոսկե դպրոցական էր և ոսկե ուսանողուհի Երևանի պետական մանկավարժականում, որտեղ հետագայում դարձավ հայ գրականության ամբիոնի երկարամյա վարիչը՝ իր ազատամտությամբ զգալիորեն ազատականացնելով դասավանդման բովանդակությունն ու մեթոդիկան: Իբրև գիտնական՝ նա ձևավորվեց հայ դասական բանասերների ու գրականագետների, պատմաբանների ու մշակութաբանների դպրոցներում, որոնց հատուկ էր հայոց ազգային ֆենոմենի խոր ըմբռնումը, Մատենադարանը դարձավ նրա երկրորդ, գուցե և առաջին անփոխարինելի հանգրվանը, որտեղ առ այսօր լինում է բուհական աշխատանքից ազատ յուրաքանչյուր օր և ժամերով գրուցում ձեռագրերի ու մատյանների հետ («Օ՛, գրքերի աշխարհը, տիեզերք է անեզր»), նրան գիտնական օժեց տաղանդավոր հետազոտող և ուսուցիչ Ասատուր Մնացականյանը, որի ասպիրանտը և համախոհը եղավ: Այս ամենն Ա. Դոլուխանյանին սովորեցրին ինչպես և դեպի ուր նայել: Մեծն Մանուկ Աբեղյանի գիտական ժառանգությունն աչքի է ընկնում երկու արմատական հատկանիշով՝ բանասիրական և գրականագիտական, որոնք մեկտեղված են և ունեն միաժամանակյա ընթացակարգ: Կարծում եմ, միայն այս եղանակով կարելի է ժամանակակիցներիս ամբողջականորեն ճանաչելի դարձ-

նել հայոց՝ հատկապես հնագույն ու միջնադարյան գրականությունը
 և դրանց հեղինակներին: Այս համադրական մեթոդաբանությունը, որ
 Աբեղյանի ծանրակշիռ նորարարական ներդրումն է հայ բազմադար-
 յան գրականության ուսումնասիրման ասպարեզում, շարունակեցին
 նրա հետևորդները, նրանց թվում և դոկտոր, պրոֆեսոր Ա. Դուլխանյանը,
 որի բանասիրական և գրականագիտական մոտեցումները շատ
 աշխատություններում հնարավոր չէ իրարից տարանջատել, դրանք
 միասնական վերլուծաբանություն են: Սա հնարավոր չէր դառնա, եթե
 Ա. Դուլխանյանը չլիներ նաև զգայուն բանասեր և զգայուն գրակա-
 նագետ: Առաջինն արտահայտվել է նրա գուտ բանասիրական, գրա-
 կանագիտական և տեքստաբանական գրքերում («Ֆելիքս Նևը և նրա
 քրիստոնեական հայ մատենագրությունը», «Ներսես Մոկացի, Բա-
 նաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Դուլխանյանի», «Խա-
 չատուր Կեչառեցի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դուլխանյանի»,
 «Հայ ժողովրդական բանահյուսության նյութեր», «Եվրոպացի հայա-
 գետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին») և բազմաթիվ հոդ-
 վածներում («Ներսես Մոկացու անտիպ «Ողբը», «Էպոսի առաջին
 գրառումը», «Հայ գրականությունը լեհահայ գաղութում» (լեհերեն),
 «Գրիգոր Լուսավորչի Տեսիլի օտար աղերսները», «Ն. Շնորհալու
 «Վարդանանց» շարականը», «Դիոնիսիոս Արիոպագացու «Երկնային
 քահանայապետությունը» Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագ-
 րերում» և այլն): Հիանալի իմանալով մեր գրականության հազա-
 րամյա դաշտը, նրա գրաբարը, միջին հայերենը, բարբառներ, ժամա-
 նակակից հայոց լեզուն՝ իր երկու ճյուղերով, Դուլխանյանը հաճախ
 որոնում է այնպիսի խնդիրներ (հատկապես միջնադարյան գրակա-
 նության մեջ), որոնք քիչ են լուսաբանված կամ ամենևին լուսաբան-
 ված չեն՝ վկայություն նրա անընդմեջ հետաքրքրասիրության: Օրի-
 նակ՝ Նարեկացու «Մատյանի» և բյուզանդական միստիկ Սիմեոն Նոր
 Աստվածաբանի հիմների զուգահեռումը ցարդ չի արվել ոչ մեկի
 կողմից (տես «Литературные параллели, Москва, Российская академия

наук, 2010»): Ա. Դոլուխանյանի գրքերը և շուրջ 300 հոդվածները, որոնք վերաբերում են մեր գրականության տարբեր շրջափուլերին, նաև ունեն ազգային-քաղաքացիական ուղղվածություն: Հոդվածներից մեկի վերնագիրն է. «Առանց հայ գրականության պատշաճ ուսուցման անհնար է կատարյալ ազգային դաստիարակության իրականացումը մերօրյա դպրոցում»: Այդ պատշաճ իրականացում է և Ա. Դոլուխանյանը՝ իր գիտական հետազոտություններով և ամենօրյա դասախոսություններով ու ելույթներով: Այս հավատամքն այսօր ունի բարոյական շատ կարևոր խորհուրդ, երբ մեր ժամանակն իր շավղից ամեն առումով դուրս է սայթաքել՝ մեր հայրենիքն ու ժողովրդին կանգնեցնելով դժխեմ բախտի առջև: Մասնակցելով բազմաթիվ գիտաժողովների Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում՝ նա, գրական հարցերի արծարծմանը զուգահեռ, դատապաշտպանություն է արել ընդհանրական մշակույթին և հայ ժողովրդի պատմությանը, փաստարկել կարևոր ճշմարտություններ, օտարներին ցույց տվել մեր հոգևոր բովանդակության միջազգային նշանակությունը: Նույնին ձգտել է նաև օտար լեզուներից արված իր թարգմանություններով: Այս ասպարեզում մեզանում ուշագրավ գիտական նորություն եղավ Ավեստայի «Վենդիդատ» գրքի երկու հատվածների թարգմանությունը ֆրանսերենից, որոնք լույս տեսան մեր ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» և «Պատմաբանասիրական հանդես» պարբերականներում: Ա. Դոլուխանյանն ամենօրյա հետաքրքրությամբ է վերաբերվում այն օտար գրական-գիտական հուշարձաններին, որոնք առնչվում են հայերիս հոգևոր երևույթի հետ: Նարեկացու և բյուզանդական Սիմեոն Նոր Աստվածաբանի զուգահեռն արդեն նշել եմ: Սրանք միակը չեն, այլ մի քանիսից ամենաեականները, որ մեզանում առաջին անգամ Դոլուխանյանն է գիտական շրջանառության մեջ դրել: Այստեղ հիշատակեմ նաև «Պատմության վկայությունը. ուշագրավ հուշեր 19-րդ դարասկզբի Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի մասին» հոդվա-

ծը (թարգմանությունն ֆրանսերենից), «Ռիչարդ Դորմենթ. Հանճարն աքսորում» (Արշիլ Գորկու մասին, թարգմանությունն անգլերենից), «Ժողովրդական մի ասացվածքի դրսևորումը «Ավեստայում» (առաջաբան, թարգմանությունն ֆրանսերենից) և այլն: Օտար լեզուների իմացությունը Դոլուխանյանին օգնում է նկատելու հայ և այլոց մշակութային առնչությունները գրական, պատմագիտական և գեղարվեստական ասպարեզներում: Նա վաղուց կողմնորոշվում է այն համընդհանուր ճշմարտությամբ, ըստ որի՝ հայոց հոգևոր աշխարհը համաշխարհային ամբողջության մի մասն է: Լինելով երկարամյա և հմուտ դասախոս՝ Ա. Դոլուխանյանը քաջ գիտակցել է նաև դասագրքերի կարևորությունը ուսումնառության ընթացքում և սեփական փորձից ելնելով՝ ստեղծել մի քանի պրակտիկ ձեռնարկներ. «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա», «Հայ գրականության պատմություն. Հին և միջնադարյան գրականություն», «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից»: Չափազանց բազմաբովանդակ են գրականագետի հոդվածները, որոնցում շեշտը դրվում է հին և նորագույն գրականության ու գիտության, մշակութային ու լուսավորչական կայուն, այսօր էլ օգտակար արժեքների վրա: Շատ հոդվածներ պանծացնում են անցյալի դեմքերի կյանքն ու գործը, որ երախտիքի բարոյական տուրք է մեր երախտավորներին: Աչքիս առջև են նաև տասնյակ հոդվածներ ժամանակակիցներիս գրվածքների վերաբերյալ, որոնցից ոչ բոլորում է չափ ու չափանիշ պահպանվում, սակայն այս սահմանախախտումը պայմանավորված է Ա. Դոլուխանյանի բարի էությանը, այստեղ նրան որոշ չափով «չարությունն» է պակասում: Ա. Դոլուխանյանը բազմիցս եղել է արտասահմանում, սակայն ոչ որպես շատերի պես պարզ զբոսաշրջիկ, այլ գիտական նպատակամղվածությամբ՝ այցելել գրադարաններ, թանգարաններ, մատենադարաններ, որտեղ հնարավոր է հայկական մշակույթի հետքեր լինեն: Եվ գտնում է այդ հետքերը: «Ուխտագնացություն դեպի Արևմտահայաստան» և «Հունաստանի

պատմական հուշարձաններն այսօր» հրապարակումներում բացահայտվում է մի աշխարհատարածք, որով անցել է ոչ այլ ոք, քան Մովսես Խորենացին՝ իր հանճարեղ պատմագրությունը կյանքի կոչելու:

Խոսքիս սկզբում ես հիշատակեցի Ա. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունը, որ նրա գիտական երկարամյա աշխատանքի կարևոր արդյունքներից է: Վերջնամասում նշեմ ևս մի ակնառու հաջողություն. նա միանձնյա մտահղացավ և իրականացրեց «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը վեց գրքի հրատարակությամբ՝ ընդգրկելով Ֆելիքս Նևի, Մարի Ֆելիսիտե Բրոսսեի, Վիկտոր Լանգուայի, Էդուարդ Դյուլորիեի, Ֆրեդերիկ Ֆեյդիի և Ֆրեդերիկ Մակլերի հայագիտական ժառանգությունը, որը մեծավ մասամբ անձանոթ էր Հայաստանում: Մենք՝ հայերս, ակնկալում ենք, սիրում, որ օտարները մեզ ուշադրություն դարձնեն, հաճախ էլ նեղանում ենք, որ անտարբեր են մեր պատմությանն ու ճակատագրին, իսկ մենք, ասացեք խնդրեմ, մի՞շտ ենք ուշադիր այլոց հանդեպ: Կասեմ՝ ոչ: Ա. Դոլուխանյանի այս գիտական նախաձեռնությունը՝ արժանին հատուցել լուսավոր եվրոպացիներին, որոնք տեսան ու գնահատեցին հայ ժողովրդի միտքն ու գրական մշակույթը հին աշխարհի նորացող ժամանակներում, լրացնում է մեր բացթողումը և ունի բարոյական անգնահատելի արժեք:

Բոլորս գիտենք, Ա. Դոլուխանյանը հայ արդի գրական կյանքում կարևոր ներկայություն է: Նրա ելույթներն ու հոդվածներն աչքի են ընկնում լայն տեղեկացվածությամբ, սիրով ու պատասխանատվությամբ, դրականը և առաջադեմն ընթերցողին հասցնելու ձգտումով:

Ա. Դոլուխանյանը հասարակայնորեն գնահատված գրականագետ է, ճանաչված դասախոս, պարզևատրվել է Մովսես Խորենացի բարձրանուն մեղալով, արժանացել «Ֆ. Նանսենի ոսկե հուշամեդալի», ՀԳՄ «Գրական վաստակի համար», «Նիկոլ Աղբալյան», «Խա-

չատուր Աբովյան» մեդալներին: Իսկ անցյալ տարի ընտրվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ՝ գրականագիտության մարզում ունեցած ակնառու վաստակի համար:

Կյանքը դեռևս Աելիտա Դոլուխանյանի առջև է, գիտության ճանապարհին՝ անվերջ, որը նա շարունակելու է անցնել նույնպիսի սիրով ու արժանապատվորեն:

ՆՈՐԱՅՐ ԱՐԱԼՅԱՆ

*ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, գրող,
բանասիրական գիտությունների դոկտոր*

ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ՀԱՅԱԳԵՏ-ՄԱՆԿԱՎԱՐԺՐ

*(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի
ծննդյան 70-ամյակի առթիվ)*

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը բուրեց ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 45-ամյակը: Այս ծանրակշիռ հորելյանները նա դիմավորում է հայագիտության բնագավառում ունեցած լուրջ ներդրումով և մանկավարժական մեծ վաստակով:

Պետական-կուսակցական, տնտեսական ճանաչված գործիչ Գուրգեն Դոլուխանյանի դուստրը՝ Աելիտա Դոլուխանյանը, ծնվել է 1942 թ. փետրվարի 14-ին Երևանում: Գերազանցությամբ ավարտել է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1959 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը, արժանացել է անվանական կրթաթոշակի: 1964 թ. ինստիտուտն ավարտել է գերազանցության դիպլոմով:

Ա. Դոլուխանյանի կենսագործունեության ոլորտը լայն և ընդգրկուն է. դասախոս է, ուսումնական գործընթացի հմուտ կազմակերպիչ, բանասեր, գրականագետ, հայագետ, գրական կյանքի ակտիվ մասնակից:

Դեռևս ուսանողական տարիներին ի հայտ են եկել Ա. Դոլուխանյանի անսահման սերն ու հետաքրքրությունը հայ ժողովրդի պատմության ու գրականության նկատմամբ, որն էլ նրան մղել է դեպի գիտության անձայրածիր աշխարհը: 1964-1968 թթ. նա շարունակում է իր ուսումնառությունն ասպիրանտուրայում՝ նշանավոր հայագետ Ասատուր Մնացականյանի գիտական ղեկավարությամբ (վերջինս աշխատում էր Մաշտոցի անվան Մատենադարանում)՝ մասնագիտանալով միջնադարյան հայ գրականության հարցերի գծով: Հենց այդ ժամանակներից սկսած՝ Ա. Դոլուխանյանը մշտապես աշխատում է Մատենադարանում, կապվում ձեռագրերի աշխարհի հետ: 1972 թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ «Ներսես Մոկացի» թեմայով: Այնուհետև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում կատարում է ասպիրանտուրայի վարիչի պարտականությունները, ապա 1969-ից անցնում դասախոսական աշխատանքի: Վերջինս նա զուգակցել է գիտաուսումնական գործի կազմակերպչի բարձր ունակություններով, որոնք դրսևորվել են ֆակուլտետին կից մասնագիտացված գիտխորհրդի քարտուղար լինելու տարիներից ու ավելի ընդլայնվել 1990-ից, երբ ընտրվել է ինստիտուտի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Իսկ մինչ այդ՝ 1987թ., Ա. Դոլուխանյանը հրատարակել էր «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» մենագրությունը և այն 1989 թ. պաշտպանել որպես դոկտորականատենախոսություն: 1990 թ. պրոֆեսոր է:

Ա. Դոլուխանյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են հայ հին, միջնադարյան, նոր և ժամանակակից գրականու-

թյան, հայագիտության խնդիրներին: Նրա թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները նվիրված են եղել միջնադարյան գրականության հիմնախնդիրներին: Վերջինս եղել է նրա շուրջ 4 տասնամյակների գիտական հետաքրքրությունների հիմնական թեման, այդ բնագավառում նա ունի լուրջ ներդրում: Ա. Դոլուխանյանը մեր օրերի նշանավոր միջնադարագետներից է: Միջնադարի հայ գրականության բնագրերի ուսումնասիրությանը զուգահեռ՝ անվանի բանասերը կատարել է բնագրագիտական, տեքստաբանական և ձեռագրագիտական աշխատանք ու հրատարակել Ներսես Մոկացու (1975, 1985) և Խաչատուր Կեչառեցու (1988) քննական բնագրերը: Ա. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» աշխատությունը նոր խոսք էր միջնադարյան հայ քնարերգության ուսումնասիրության պատմության մեջ: Ողջ միջնադարի համար խիստ կարևոր հոգու և մարմնի խնդիրը, որը սերտորեն առնչվում է ինչպես ոգու և նյութի, կեցության ու մտածողության, բնության ու Աստծու հարաբերության փիլիսոփայական հասկացությունների, այնպես էլ կրոնադիցաբանական նախահիմքերի հետ, աշխատության մեջ արժանացել է մանրագին քննության: Այն առաջին ուսումնասիրությունն էր, որտեղ ամբողջացված է ինչպես տեսական և փիլիսոփայական, այնպես էլ բանահյուսական և գրական ողջ նյութը՝ պատմական զարգացման փուլերի և ուրիշ ժողովուրդների փիլիսոփայության ու գրականության մեջ եղած համանման երևույթների բացահայտմամբ: Քաջ տիրապետելով նյութին՝ Ա. Դոլուխանյանը չի խուսափել համապատասխան զուգահեռներից՝ լինի պարթևական, եգիպտական, ասորա-բաբելական, սլավոնական և այլ գրականությունների հետ: Նկատենք, որ աշխատությունը ժամանակին արժանացավ լուսահոգի Արշալույս Ղազինյանի բարձր գնահատանքին (տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 8, էջ 88–91): Ի դեպ, 2008-ին աշխատության լրամշակված տարբերակը հրատարակվեց ռուսերեն և մեծ արձագանք ունեցավ:

Մոսկվայում լույս տեսնող «Լիտերատուրնայա գազետան» 2010 թ. ապրիլի 7–13-ի համարում տպագրեց այս գրքի մասին Յու. Բարանովի գնահատանքի խոսքը (գրախոսությունն արտատպվեց ՊԲՀ-ում՝ 2010, № 2, էջ 279–280, հայերեն թարգմանվեց ու տպագրվեց «Գրական թերթում»): Ա. Դոլուխանյանը 2009 թ. հրատարակում է միջնադարի հայ գրականության համեմատաբար քիչ ուսումնասիրված հեղինակներից մեկի՝ XVI–XVII դդ. եկեղեցական նշանավոր գործիչ, փիլիսոփա, բանաստեղծ Ներսես Մոկացու կյանքին և գործունեությանը նվիրված մենագրությունը: Մոկացին այն հեղինակներից է, որն իր ողջ կենսագործունեությամբ ազդել է ժամանակաշրջանի գրական-հասարակական գործընթացի վրա, որի գրական հարուստ ժառանգությունը, սակայն, քիչ էր ուսումնասիրված: Մենագրության մեջ հեղինակը ներկայացրել է հիմնահարցի կարևորությունն ու բացերը՝ ուշադրության կենտրոնում ունենալով հատկապես Ներսես Մոկացու կյանքի, գրական վաստակի վերհանումն ու գնահատումը, նրա գրական ժառանգության հետ կապված ճշգրտումները, համապատասխան վերլուծությունները, ստեղծագործությունների աղբյուրներն ու աղերսները, գրական-ստեղծագործական միջավայրը, որի շրջանակներում էլ քննության նյութ են դարձել ժամանակաշրջանի հայտնի և Մոկացու գործունեությանն առնչվող կրթօջախների վերաբերյալ հարցեր: Աշխատությունը գրվել է բազմազան սկզբնաղբյուրների, հայագիտական ուսումնասիրությունների, հատկապես ձեռագրական փաստահարուստ նյութի հիման վրա: Բովանդակալից և հետաքրքիր սույն ուսումնասիրությամբ Ն. Մոկացին բնութագրվում է որպես եկեղեցական եռանդուն ու ակտիվ գործիչ, շնորհալի բանաստեղծ, որի հասարակական և գրական կյանքի առանցքն են կազմել հայրենիքի, հավատքի և լուսավորության գաղափարները՝ սերտորեն ձուլվելով միմյանց հետ: Դա իր ժամանակի համար ճիշտ ճանապարհ էր՝ օտար լծի տակ հեծող ժողովրդի գոյատևման ու ապագան ապահովելու համար: Ահա սա է հեղինակի տրամաբանական եզրակացությունը: Ի

դեպ, աշխատությունը լայն արձագանք ունեցավ գիտական շրջանակներում, տպագրվեցին այն արժեքավորող գրախոսություններ (տե՛ս, մասնավորապես, ՊԲՀ, 2010, № 3, էջ 270–273):

Ա. Դոլուխանյանն անդրադարձել է նաև հայ հին գրականության խնդիրներին, գրել գիտական մի շարք աշխատություններ: Դրանցից առավել ուշագրավը «Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» (2004) ուսումնասիրությունն է:

Երկար տարիներ դասախոսական աշխատանք կատարելով՝ անվանի գիտնական-մանկավարժը արժանին է հատուցել դասագրքերի և ուսումնական ձեռնարկների նշանակությանն ու կարևորությանն արդի ուսումնական գործընթացում և գրել է մի շարք աշխատանքներ՝ «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» (2006), «Հայ գրականության տեսություն» (2006), «Հայ գրականության պատմություն (հին և միջնադարյան գրականություն)» (2006), «Հայ ժողովրդական բանահյուսություն» (2008), «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից» (2009):

Անուրանալի է Ա. Դոլուխանյանի ավանդը հայագիտության բնագավառում: Հայտնի իրողություն է, որ վերջին դարերում հայագիտությունը բուռն ծաղկում ապրեց Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, նաև Ռուսաստանում՝ Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող հայագիտական կենտրոններով: Եվրոպացի հայագետները սերտ կապերի մեջ էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների անդամների, Կ. Պոլսի, Թիֆլիսի ու Էջմիածնի նշանավոր հայագետների հետ: Գիտական այս կարևորագույն շարժման երախտավորներին ու նրանց թողած գիտական ժառանգության վերհանմանն է Ա. Դոլուխանյանը նվիրել 2000 թ. իր հիմնադրած «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը: Միջնադարը, հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը եվրոպացիներին ու աշխարհին ներկայացնող հայագետներից այդ մատենաշարով նա արդեն հրատարակել է վեց ուշագրավ աշխատանք: Այսօր ընթերցողի

սեղանին են «Ֆելիքս Ներ և հայ քրիստոնեական մատենագրությունը» (2001), «Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ» (2002), «Վիկտոր Լանգլուան հայագետ» (2003), «Էդուարդ Դյուլորին հայագետ» (2004), «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» (2008), «Ֆրեդերիկ Մակլերը հայագետ» (2011) մենագրությունները: «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի գրքերն ամբողջովին նորություն են և արժանի են թարգմանվելու եվրոպական, նաև ռուսերեն լեզուներով, որովհետև դրանցում առաջ են քաշվում կենսական այնպիսի հարցադրումներ, որոնք հրատապ ու արդիական են հայագիտության համար: Ի դեպ, այս շարքին կարելի է դասել Ա. Դոլուխանյանի «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (2005) աշխատությունը՝ նվիրված հայոց այբուբենի ստեղծման 1600-ամյա հոբելյանին: Գրքում խոսվում է ֆրանսիացի, բելգիացի, անգլիացի, գերմանացի և այլազգի մի շարք հայագետների այն աշխատությունների մասին, որոնցում Մաշտոցյան այբուբենի ստեղծումը բնորոշվում է որպես գիտական սխրանք: Առանձնահատուկ են Ա. Դոլուխանյանի վերաբերմունքն ու մոտեցումները ժամանակակից գրականության տարաբնույթ խնդիրներին, հայ պոեզիայի դրսևորումներին, որոնց արձագանքել է գրաքննադատական տասնյակ հոդվածներով ու մի շարք գրքերով: Այդ աշխատանքներից հիշատակենք «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» (1999), «Շառլ Ազնավուրը բանաստեղծ» (2002), «Գրիշա Դարբինյանի գրական խոհերը» (2005) և «Նորայր Ադալյանի ստեղծագործությունը» (2011) վերնագրերով ուսումնասիրությունները: Անվանի գրականագետի լայն մտահորիզոնի վկայությունն է նաև նրա ծավալած թարգմանչական գործունեությունը, որը խարսխված է ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի խորը իմացության վրա: Հիշատակենք բնագրերից նրա կատարած բարձրակարգ և հմուտ թարգմանությունները Պ. Ռոնսարի, Թալի դը Մոլենի, Մ. Քոզեմի, Ջ. Քոլինգի, Ռ. Դոմենթի ստեղծագործություններից: Գիտական մեծ հետաքրքրություն և արձագանք ունեցան Ավեստայի «Վենդիդատ» գրքի հատվածների

թարգմանությունը ֆրանսերենից. «Երկու ուշագրավ հատված «Ավեստայից» (ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, № 1, էջ 150–160) և «Ժողովրդական մի ասացվածքի դրսևորումը «Ավեստայում» (ՊԲՀ, 2000, № 1, էջ 207–214) և այլն:

Մի ուրույն բնագավառ են նաև Ա. Դոլուխանյանի գրաքննադատական հոդվածները (գրախոսություններ) և գիտության ու մշակույթի մեր երախտավորների մասին բովանդակալից հոդվածները, որոնք առանձնանում են իրենց խորքային դիտարկումներով ու դրսևորումներով, սիրով ու ջերմությամբ: Այսպես՝ հիշատակենք դրանցից մի քանիսը. «Արամ Տեր-Ղևոնդյան. Հոդվածների ժողովածու» (ՊԲՀ, 2004, N 3, էջ 276-280), Ս. Սարիսյանի «Հայ գրականության երկու դարը» քառահատորյակի (ՊԲՀ, 2005, N 3, էջ 258-264), Է. Հարությունյանի «Մխիթար Այրիվանեցի. Գանձեր և տաղեր» (ՊԲՀ, 2006, N 1, էջ 318-320), Ք. Ս. Տեր-Դավթյանի «Թովմա Մեծոփեցի. Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» (ՊԲՀ, 2006, N 2, էջ 308-310), Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» (ՊԲՀ, 2007, N 1, էջ 294-298) աշխատությունների մասին գրախոսությունները, Սևակ Արզումանյանի (ՊԲՀ, 2004, N 1, էջ 315-318), Հրաչ Բարթիկյանի (ՊԲՀ, 2007, N 2, էջ 303-307), Սարգիս Հարությունյանի (ՊԲՀ, 2008, N 2, էջ 259-264), Սիմոն Կրկյաշարյանի (ՊԲՀ, 2009, N 1, էջ 262-266), Պիոն Հակոբյանի («Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, N 4, էջ 316-321) և այլոց մասին բովանդակալից խոսքը:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ նշենք, որ Ա. Դոլուխանյանը 24 գրքի և գիտական շուրջ 300 հոդվածի հեղինակ է: Նրա աշխատանքները լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն լեզուներով: Ա. Դոլուխանյանը մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների, հանդես եկել ուշագրավ ու բովանդակալից զեկուցումներով, ներառյալ արտերկրում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում:

Հայտնի իրողություն է, որ Ա. Դոլուխանյանը մեծ էրուդիցիայի տեր, անհանգիստ և պրպտող բնավորությամբ անձնավորություն է. արտերկիր կատարած բազմաթիվ ուղևորություններից հետո մշտապես հանդես է եկել ելույթներով, զեկուցումներով, ճանաչողական և տեղեկատվական բնույթ ունեցող հոդված-ակնարկներով, որոնք հարստացնում են մեր գիտելիքները: Դրանցից են «Ուխտագնացություն դեպի Արևմտահայաստան» («Յառաջ» (Փարիզ), 2009, հունվար), «Մեքսիկայում ազգային դրոշը սրբություն է» («Գրական թերթ», 2009, N 32), «Ռումեռո Բրիտոյի նկարները մարդուն պարզևում են մանկական հրճվանք» («Գիտություն», 2010, N 1, հունվար), «Հունաստանի պատմական հուշարձաններն այսօր» («Գրական թերթ», 2010, N 12) և այլն: Նկատենք, որ այդ ուղևորությունների ընթացքում նա լինում է գրադարաններում, թանգարաններում և վերադառնալով գիտական ու գրական լայն հասարակությանն է ներկայացնում նաև իր պրպտումների արդյունքները: Հիշենք դրանցից մի քանիսը. «Գրիգոր Նարեկացու քերթվածները Բրիտանական թանգարանի ձեռագրերում» (ՊԲՀ, 2003, N 3, էջ 201-206), «Ինչպիսին տեսա գրադարանը Տորոնտոյում» («Գրական թերթ», 2005, N 31), «Նոր նկատում Լոնդոնի Բրիտանական թանգարանում» («Գրական թերթ», 2009, N 9): Այս բնույթի նրա աշխատանքները խոսում են գիտնականի քաղաքացիական և ազգային հստակ նկարագրի մասին:

Ա. Դոլուխանյանը գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործի վարպետ է, մեծ աջակցություն է հանդես բերում երիտասարդ կադրերի պատրաստման ու դաստիարակման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի թեկնածուական ատենախոսություններ, եղել է դոկտորական բազմաթիվ ատենախոսությունների ընդդիմախոս: Մանկավարժական համալսարանի նրա ղեկավարած ամբիոնը ատենախոսությունների պաշտպանության առաջատար կազմակերպությունների շարքում գրավում է առաջնակարգ տեղ: Ա. Դոլուխանյանը Գիտություն-

ների ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսի» և «Գրական թերթի» խմբագրական խորհուրդների ամենաակտիվ անդամներից է, ՀՊՄՀ-ի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտական խորհուրդների, ՀՊՄՀ կառավարման խորհրդի անդամ է: Ա. Դոլուխանյանի անցած ճանապարհը, փորձն ու գիտելիքները, սկզբունքայնությունն ու անաչառությունը հաշվի առնելով՝ երկար տարիներ նրան վստահվել է հանրապետական դպրոցական օլիմպիադաների՝ հայ գրականության գծով գործող խորհրդի նախագահի պատասխանատու պարտականությունը, աշխատանք, որը նա կատարել է մի առանձնակի սիրով ու նվիրումով:

Ա. Դոլուխանյանը եռանդուն մասնակցություն է ունենում մեր երկրի հասարակական, գրական-մշակութային կյանքին, որի համար էլ արժանացել է մի շարք պարգևների ու գրական մրցանակների. գիտամանկավարժական բնագավառում ունեցած ներդրման համար 2003 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, 2008-ին «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» մենագրության համար արժանացել է Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղբալյան» մրցանակին, «Ֆ. Նանսենի ոսկե հուշամեդալի», ՀԳՄ «Գրական վաստակի համար» և «Խաչատուր Աբովյան» մեդալների, 2011-ին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալի»: 2010 թ. գրականագիտության բնագավառում ունեցած մեծ ներդրման համար Ա. Դոլուխանյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հարկ ենք համարում հատուկ նշել հայագետի անմնացորդ նվիրումը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին, որտեղ ուսանել, աշխատել և կրթել է տասնյակ սերունդներ, իր ողջ գործունեությամբ նպաստել բուհի, նրա կուլեկտիվի ու սաների բարի համբավի տարածմանը: Ա. Դոլուխանյանը գիտական հասարակայնության և ուսանողության շրջանում հարգված ու սիրված անձնավորություն է, բազմակողմանի զարգացած անհատականություն, իր անմիջական, ընդառաջող, միաժամա-

նակ սկզբունքային և անաչառ բնավորությամբ, լայնախոհությամբ ու բարյացակամությամբ առանձնանում է մեր միջավայրում: Բոլորին քաջ հայտնի է, որ Ա. Դոլուխանյանն ապրում է ստեղծագործական բուռն ու լեցուն կյանքով, իր գիտական կյանքի ծաղկուն շրջանում է, և մեր հասարակությունը, իրավամբ, նրանից նորանոր սպասելիքներ ունի: Սրտանց շնորհավորելով մեր գործընկերոջը՝ հայագիտության մշակ ու վաստակաշատ մանկավարժ Աելիտա Դոլուխանյանի հոբելյանը՝ մաղթում ենք նրան առողջություն, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք և երկար տարիների կյանք:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆՉԵՂՈՒԹՅԱՄԲ

Աելիտա Դոլուխանյանի գիտական գործունեության կարևոր ուղղություններից է Եվրոպական հայագիտության և ի մասնավորի ֆրանսիական հայագիտության պատմության ուսումնասիրությունը: Իր հեղինակած «Եվրոպացի հայագետներ» մատենաշարով արդեն լույս է տեսել յոթ գիրք: «Եվրոպացի հայագետներ» մատենաշարն ունի ոչ միայն գիտական ու ճանաչողական, այլև ազգային-քաղաքական կարևորություն: Մեն–Մարտենին, Մարի Ֆելիսիտե Բրոսսեին, Էդուարդ Դյուլորիեին, Վիկտոր Լանգուային, Ֆրեդերիկ Մակլերին և Ֆրեդերիկ Ֆեյդիին նվիրված յոթ գրքերում ներկայացնում է ֆրանսիական հայագիտության զարգացման ընթացքը հայագիտության ընդհանուր հարցերի մատնանշումից մինչև առանձին գիտակարգերին վերաբերող քննությունը:

Դոլուխանյանը պատմական մոտեցման և այսօրվա ըմբռնումների հետ հարաբերակցությամբ է գիտականորեն արժևորում եվրոպացի հայագետների թողած գիտական ժառանգությունը:

Շարքի գլխավոր նպատակը քանի որ հիշյալ գիտնականների տեսական ըմբռումները և դրույթները հայ ընթերցողին ներկայացնելն է, ուստի թարգմանաբար մեջբերում կամ վերաշարադրում է նրանց հայտնած կարծիքներն ու տեսակետները այս կամ այն հարցի վերաբերյալ:

«Եվրոպացի հայագետներ» շարքի թեմատիկ ընդլայնված հանրագումարը կարելի է համարել «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» (Երևան, 2005թ.) գիրքը, որում բերված են ֆրանսագիր, գերմանագիր և անգլիագիր ուսումնասիրողների կարծիքները հայոց այբուբենի մասին: Ընդ որում, ոչ թե Մաշտոցյան այբուբենին նվիրված հոդվածներ են հավաքված, այլ Դոլուխանյանը մանրակրկիտ որոնմամբ ի մի է բերել տարբեր հեղինակների հայ մատենագրությանը և հայոց պատմությանը վերաբերող հոդվածների և ուսումնասիրությունների այն հատվածները, որոնք վերաբերում են Մաշտոցին և հայոց այբուբենին:

Շատ կարևոր է գրքում առաջ քաշված այն հարցադրումը, որ հիշյալ հատվածները և բնորոշումները ճիշտ կլինի թարգմանել և առանձին գրքով տպագրել հայերեն: Ավելին, կարող ենք ասել, որ Դոլուխանյանի այս ուսումնասիրությունն ընդունելով որպես մատենագրական և աղբյուրագիտական հիմք, նրանում մատնանշված հատվածներն ի մի հավաքելով տպագրելն ըստ դրանց բնագրերի լեզվի՝ անգնահատելի նշանակություն կունենա ոչ միայն հայագիտական առումով, այլև կնպաստի մեր երկրի մշակութային հեղինակության բարձրացմանը:

Նույն ձևով «Եվրոպացի հայագետներ» մատենաշարում նշված նյութերի հատընտիր հատվածների հիման վրա շատ կարևոր կլինի կազմել ֆրանսերեն բնագրերն ընդգրկող մի ընտրանի «Ֆրանսիացի հայագետները Հայաստանի և հայ մշակույթի մասին» խորագրով, որը ևս գիտական կարևորությունից բացի կունենա նաև միջազգային մեծ հնչեղություն:

Շարքի գրքերում շարունակ ընդգծվում է, որ հայ գրականությունը և հայ մշակույթը Եվրոպայի հայագետներին այն համոզումն է ներշնչել, որ հայերը, մնալով հայ մատենագրության ժառանգորդները, կպահպանեն իրենց ազգային ինքնությունը:

Կարող ենք ասել, որ նույն այս գիտակցումն է եղել և մնում է Աելիտա Դոլուխանյանի գիտական նվիրման, նրա գրած և գրելիք ուսումնասիրությունների հիմքում:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Արեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն,
բանասիրական գիտությունների դոկտոր*

ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

Եթե Աելիտա Դոլուխանյանին անձամբ չճանաչեի, կկարծեի, թե նրա անունով հրապարակում առկա բազմաժանր վաստակի հեղինակը ոչ միայն նա է, այլև համախոհությամբ միմյանց հարազատ ուրիշներ: Գրականության պատմաբան, բանասեր, քննադատ, տեքստաբան, թարգմանիչ, ով այս բոլոր ասպարեզներում կարևոր խոսք է ասում ինչպես գիտական, այնպես էլ գրասեր հանրությանը, իսկ որպես բարձրագույն բուհի ուսուցիչ երիտասարդությանը հորդորում է հետևել գրականության իմաստությանն ու խրատներին:

Աելիտայի բազմաթիվ գրքերից մեկն առանձնահատուկ, ողնաշարային նշանակություն ունի նրա գիտական ժառանգության տարածքում՝ «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ», որի ռուսերեն հրատարակությանը «Լիտերատուրնայա գազետայում» բարձր գնահատությամբ անդրադարձել է անվանի միջնադարագետ Յուրի Բարանովը: Աելիտայի շատ ուսումնասիրություններ ավելի կամ պակաս չափով հարաբերում են այս պրոբլեմին. դա նրա համար գիտական մտասնեռում է:

Ցանկանում եմ նաև նշել նրա մի նախագիծն ու բացառապես միանձնյա իրականացումը՝ «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը: Ֆրանսիական ու անգլիական արխիվների հիմքով նա արդեն հրատարակել է մենագրություններ Ֆելիքս Նևի, Վիկտոր Լանգրուայի, Մեն-Մարտենի և էլի չորս եվրոպացիների մասին: Ծրագիրը շարունակություն է ունենալու: Այս մատենաշարն ունի ինչպես գիտական, այնպես էլ, հայերիս համար, բարոյական նշանակություն: Մենք ուզում ենք, որ մեր մասին խոսեն, մեզ սիրեն ու գնահատեն, իսկ մենք մի շտ ենք ուշադիր այլոց հանդեպ: Ոչ միշտ: Հաճախ մոռանում ենք: «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը մեր ժողովրդի բարոյական տուրքն է մեր օտար բարեկամներին:

Աելիտա Դոլուխանյանի երկրորդ, գուցե առաջին տունը Մատենադարանն է, որտեղ նա լինում է յուրաքանչյուր շաբաթ օր: Նա հիանալի գիտի Մատենադարանի գանձարանը, որին հենվում են նրա շատ աշխատանքներ: Ավելորդ չէ ասել՝ ժամանակակից հայոց լեզվին տիրապետելու մակարդակով տիրապետում է գրաբարին, միջին հայերենին ու աշխարհաբարի զարգացման փուլերին: Ազատորեն օգտվում է ռուսերեն, անգլիագիր ու ֆրանսերեն գրականությունից, միջազգային գիտաժողովներում այդ լեզուներով հանդես գալիս զեկուցումներով: Սիրում է շրջագայել՝ արևմտյան թանգարաններում ու գրադարաններում որոնելով հայի հետք, հայ մշակույթ, հայ գիտություն ու գրարվեստ: Աելիտա Դոլուխանյանի գործը բարձր է գնահատվել պաշտոնապես և հասարակայնորեն: Չնշեմ ամեն ինչը, բավական է ասել՝ նա ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ: Եվ ամենանշանակալից ու բնորոշ գունագիծը՝ հայոց հասարակագիտությանն ու գրականությանը անմնացորդ նվիրվածություն:

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼՅԱՆ

ՄԻՇՏ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ

Աելիտա Դոլուխանյանի հետ ծանոթացել եմ, երբ «Գրական թերթի» խմբագիրն էի, թեև գիտական աշխարհում վաղուց էր հանրաճանաչ: Թերթի համար գրված նրա առաջին իսկ հոդվածից հասկացա, որ ինչպես Դելակրուան կասեր. «Նրա տաղանդը կրում էր բարեկրթության և արիստոկրատիկ վարք ու բարքի դրոշմը»: Մեր համագործակցությունը պիտի շարունակություն ունենար և ունեցավ: Դոլուխանյանը ոչ միայն թերթի լավագույն հեղինակներից էր, այլև նրա հավատարիմ բարեկամը՝ կազմակերպելով թերթի բաժանորդագրությունը մանկավարժական համալսարանում, հանդիպումներ կազմակերպելով ուսանողության և խմբագրության աշխատակազմի հետ, փաստացի ստանձնելով թերթի դեսպանի դերը: Ավելի ուշ պարզ դարձավ, թե ինչքան հետևողական ու սկզբունքային է բոլոր հարցերում: Եթե որոշել է թերթի կողքին լինել կամ ինչ-որ այլ բան ձեռնարկել, չի կարող հենց այնպես, որովհետև նրա հոգեկերտվածքում պատասխանատվության զգացումը հյուր չէ, այլ մշտաբերուն դիտորդ: Նրա համար գիտությանը, երկրին և երկրի հոգևոր ու մշակութային արժեքներին, ընկերությանն ու սեփական ձեռագրին նվիրվելը ոչ միայն գործելու և ապրելու կենսաբանական անհրաժեշտություն է, այլև ի վերուստ շնորհված առաքելություն, որի իրագործմանը զինվորագրվել է ողջ կյանքում և անմնացորդ: Նրա գործունեությունը, չնայած իր բազմազան դրսևորումների, փաստացի ներկայանում է որպես հայագիտությանը նվիրված ավարտուն և ամբողջական համակարգ՝ իր ուրույն նշանակությամբ և համաաշխարհային քաղաքակրթության համապատկերում իր տեղը հաստատելու լրջագույն հայտով: Իմ գործը չէ, իրականում չեմ էլ կարող, գնահատել Դոլուխանյան գիտնականի, մանկավարժի, թարգմանչի մեծածավալ վաստակը: Ավելի հաճելի է ներկայացնել Դոլուխանյան մարդու նկարագիրը՝ սկզբունքային, անաչառ, ընդառաջող, նպատակային, մեծահոգի, քաղաքացիական

կայուն կողմնորոշմամբ, կանացի ու հմայիչ... Իսկ ամենակարևորը՝ մտավորական՝ իսկականը, որի գոյությունն ու ներկայությունը լավատեսություն է ներշնչում անգամ հոռետեսներին:

ՄԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ

Բանաստեղծ, արձակագիր

Հետաքրքիր, գեղեցիկ երազանքներով ու ձգտումներով լի տարիներ էին իմ ուսանողական տարիները: Երևանի Խ.Աբովյանի անվան ինստիտուտի բանասիրության ֆակուլտետում ուսումնաստենչ, շնորհալի բազմաթիվ սաներ էին կրթվում, ովքեր ի ծնե օժտվածությամբ, գրականության նկատմամբ ունեցած սիրով ու նվիրվածությամբ, ինչպես ասում են, խոստումնալից ապագայի հայտ էին ներկայացնում: Նրանց թվում էին Հրանտ Մաթևոսյանը, Արամայիս Սահակյանը, Ռազմիկ Դավոյանը, Արմեն Մարտիրոսյանը, Երվանդ Պետրոսյանը, Մելս Սանթրոսյանը, Մհեր Կարապետյանը, Գևորգ Թոսունյանը, Ֆելիքս Մելոյանը, մեկ-երկու կուրս հետ ու առաջ սովորող ուսանողներ: Եվ նրանց մեջ էր ժպտադեմ ու հմայիչ մի ուսանողուհի, ով հատուկ սեր ուներ հայ բանահյուսության, հին ու միջնադարյան գրականության մեծերի հանդեպ: Այո՛, հմայիչ, բոլոր ընկերների ու դասախոսների կողմից սիրված այդ ուսանողուհին Աելիտա Դոլուխանյանն էր, ում Արարիչը գեղեցիկ արտաքինի հետ խելք, իմաստություն և աշխատասիրություն էր պարզևել: Որ Աելիտան գիտությամբ էր զբաղվելու, դասախոսական աշխատանքով, պարզ էր այն օրերից, բայց որ նրա եռանդն այդքան անսպառ էր և նվիրումը՝ այդքան հետևողական, պարզվեց հետագա տարիներին, նրա աշխատանքային երկարամյա գործունեության ընթացքում: Այդ բանը հաստատեցին հեղինակած «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի յոթ գիրքը և «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին» աշխատությունը: Բանասիրական գիտությունների դոկտոր,

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Աելիտա Դուրխանյանի միտքը միշտ արթուն է, գրիչը՝ բեղուն, և նա, գրականագիտական ուսումնասիրություններից բացի, միշտ ականջալուր է մեր կյանքի հրատապ խնդիրներին, որոնց մասին հաճախ է հանդես գալիս մամուլում հետաքրքիր ու սրտացավ հրապարակախոսությամբ, Սփյուռքի հայությանը առնչվող բազմաբնույթ հոդվածներով:

Վաստակաշատ գիտնականն ու սիրված դասախոսը նշում է իր հոբելյանը: Ես, որպես վաղեմի բարեկամ, սրտանց շնորհավորում եմ նրան և ցանկանում առողջություն, նոր գիտական ուսումնասիրություններ և իր նորանոր սաների հետ խոր ու բազմակողմանի գիտելիքները կիսելու երկար տարիներ:

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանաստեղծ, մանկագիր

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՄԱՆԵՐԻՑ

ԼՈՒՍԱՄԻՏ ՄԱՐԴ – ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ինձ համար պատիվ է և մեծագույն բերկրանք այս հնարավորությունը՝ շնորհավորանքի և երախտիքի խոսքեր ուղղելու տիկին Աելիտա Դոլուխանյանին: Տիկին Դոլուխանյանի հետ բախտ եմ ունեցել շփվելու կյանքիս տարբեր փուլերում: Առաջին հանդիպումը Դոլուխանյան դասախոսի հետ էր, երբ չափազանց երիտասարդ, սակայն գրականագիտության ասպարեզում արդեն իր ուրույն վարկանիշն ունեցող համակրելի դասախոսը մեզ՝ առաջին կուրսեցիներին, տանում էր դեպի հայ ժողովրդական բանահյուսության զարմանահրաշ, հարուստ աշխարհը: Հայոց բանահյուսության անզին գանձերի հետ մեկտեղ երիտասարդ դասախոսը մեր մեջ սերմանեց նաև աշխատասիրություն, պարտաճանաչություն, նպատակասլացություն, գնահատելու, արժևորելու կարողություններ: Կարողություններ, որոնցով առատորեն օժտված էր ինքը և պատրաստակամ վարակում էր նաև մեզ:

Հետագայում արդեն պատիվ ունեցա դառնալու տիկին Դոլուխանյանի ասպիրանտը և նրա ղեկավարած ամբիոնի դասախոսը: Թե՛ որպես գիտական ղեկավար, թե՛ որպես ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանն իր անսպառ գիտելիքներով, հարուստ փորձով, մարդկային բարձր որակներով, կանացի հմայքով մի յուրօրինակ ուղենիշ եղավ ինձ համար:

Տիկին Դոլուխանյանը հաճախ է մեջբերում ֆրանսիացի նշանավոր հայագետ Մարի Բրոսսեի խոսքերը. «Երջանիկ է այն մարդը, ով կյանքում հանդիպում է լուսամիտ ուսուցչի»: Կարծում եմ այդպիսի երջանկություն բաժին է հասել շատ-շատերին: Եվ դեռ բազում սերունդներ սպասում են իրենց հերթին՝ վայելելու այն բերկրանքը,

որը կստանան լուսավոր և լուսամիտ մարդ-ուսուցչից սովորելու ընթացքում:

-Շնորհավո՛ր Ձեր տունը, սիրելի տիկին Դոլուխանյան, թող Ձեզ մշտապես ուղեկցեն երջանկությունն ու խաղաղությունը, Ձեզ արժանի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների շնորհակալ հայացքները և երկար-երկար տարիների եռանդուն ու բեղմնավոր գործունեությունը:

ՆԱԻՐԱ ՏՈՂԱՆՅԱՆ

*Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային
հիմնական դպրոցի տնօրեն,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ԵՐԲ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ Է**

Մեր հաջողությունների, կյանքի ճանապարհի հետաքրքիր ընթացքի համար սովոր ենք հիշել Աստծուն և նրա հետ կապել մեր կյանքի ընթացքը՝ մոռանալով սակայն, թե ինչ կարևոր դեր ունեն կյանքում մեզ պատահած մարդիկ: Հաջողակ կարող ենք համարել մեզ, եթե այդ մարդիկ բարի են, և երջանիկ, եթե նրանցից սովորում ենք...

1992թ. սեպտեմբերին ուսանող դառնալու առաջին իսկ օրը՝ երկրորդ դասին (հայ հին և միջնադարյան գրականություն առարկան էր), լսարան մտավ մի կին՝ առինքնող արտաքինով, մեղմ ձայնով, ճաշակով հագնված (այսպիսի արտաքինն արդեն անսպասելի էր 90-ականների ցուրտ ու մութ տարիների համար, երբ սովոր էինք տխուր դեմքեր տեսնել): Հետո ես կիմանայի, որ այդ կինը Աելիտա Դոլուխանյանն է՝ հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչը, հետո կհասկանայի, որ հին և միջնադարյան գրա-

կանությունն ինձ անընդհատ հիացնում է նրա ձայնով և մեկնաբանություններով:

Երկար ժամանակ ստացած սպավորության տակ էի և աստիճանաբար էի հասկանում, որ հայ հին և միջնադարյան գրականությունը ճակատագրական նշանակություն է ստանում՝ ինձ և Ուսուցչիս կապելով այսօր արդեն 25 տարվա բարեկամությամբ: Այդ ճանապարհին ես դեռ կբացահայտեմ եվրոպացի հայագետների շնորհակալ աշխատանքի պտուղները Աելիտա Դոլուխանյանի տքնաջան աշխատանքի արդյունքում, գրույցներ կլինեն Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի, Մխիթարյանների և մեր այն մեծերի մասին, որոնք բացառիկ լայնախոհ են եղել և արժանացել Ուսուցչիս ընդգծված հիացմունքին: Ա. Դոլուխանյանի անձով բացահայտեցի, որ միջնադարով զբաղվող հետաքրքրասեր և իր անձի նկատմամբ պահանջկոտ գիտնականի համար միջնադարը ժամանակային սահմանափակումներ չի կարող դնել. Ա. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունն արդիական է նաև այսօրվա մարդու ներաշխարհը հասկանալու համար:

Առաջին կուրսի ավարտին հայ գրականության ամբիոնի հայտարարությունների անկյունում կարդացի Հովհ. Թումանյանին վերաբերող մրցույթի մասին. մասնակցելու տարօրինակ ցանկություն ունեցա, սակայն անմիջապես վանեցի այդ միտքը՝ համոզված լինելով, որ չեմ հաղթահարի: Հենց այդ ժամին լսարան մտավ տիկին Դոլուխանյանը և հայտարարեց մրցույթի անցկացման մասին՝ ասելով. «Լիլիթ Հովսեփյանը ներկա՞ է արդյոք... Լիլի՛թ, Դուք անպայման պետք է մասնակցեք այդ մրցույթին: Ես վստահ եմ, որ Դուք կհաղթահարեք դժվարությունները»: Նրա վստահությունն իմ նկատմամբ այնքան զգալի էր, որ ես նույնիսկ չհամարձակվեցի կասկածել ուժերիս: Այսօր արդեն վստահ կարող եմ ասել, որ այս մրցույթը սկիզբ դրեց իմ մասնագիտական ինքնաճանաչմանը, մեր փոխադարձ

վատահոռությանը, հավատի և լավատեսության միջավայրին, որից ես անընդհատ սովորել եմ, վայելել եմ գիտական ղեկավարի խիստ և հոգատար վերաբերմունքը: Հաճախ նրա հարևանցի հնչեցրած, թվում է, աննշան տեղեկությունը լայն տարածք է բացել ինձ համար:

Ա. Դոլուխանյանի ինձ համար առավել կարևոր որակները խորությամբ զգացի ասպիրանտական, ավելի ուշ նաև հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում որպես դասախոս աշխատելու տարիներին: Ասպիրանտական տարիների ընթացքում, ինչպես և հետագայում, զգացել եմ նրա մտահոգությունն իմ ո՛չ միայն գիտական կյանքի նկատմամբ:

Ա. Դոլուխանյանը բացառիկ պատասխանատու վերաբերմունք ունի ուսանողի նկատմամբ. բոլոր հոդվածներն ու նյութերն ընթերցում է, ունի խորհուրդներ, դիտողություններն անում է նուրբ, իսկ քաջալերումը՝ շռայլ: Նրա ուշադրությունը զգում էի նույնիսկ այն ժամանակ, երբ նա մեզ չէր դասավանդում, հանձնարարում էր զեկուցումներ, ոգևորում մասնակցելու ուսանողական նստաշրջաններին և պայքարում էր արդար ու խելացի ուսանողի համար: Աշխատասեր և խոստումնալից ուսանողների համար նա միշտ ունի նվիրական և հետաքրքիր նյութեր: Հետագայում արդեն հասկացա, որ մարդու նկատմամբ այդ մոտեցումն իր ընտանիքից ստացած, այնուհետև կյանքի սկզբունք և ապրելակերպ դարձած վերաբերմունք է:

Ա. Դոլուխանյանի հատուկ հոգատարությունն ու միաժամանակ պահանջկոտ վերաբերմունքը հնարավորություն տվեցին վերագնահատելու իմ ուժերը, հավատալու, որ ամաչկոտ աղջնակի մեջ նորը ստեղծագործաբար յուրացնելու, հին աշխարհի հմայքը զգալու մեծ հնարավորություններ կան: Նրա նուրբ դիտողականության շնորհիվ և հորդորով ես համարձակվեցի մտնել Աստվածաշնչի «Երգերգոցի» մեկնությունների խորհրդավոր աշխարհը, որն ինձ բերեց Մաշտոցի անվան Մատենադարան: Նրանից հաճախ եմ լսել, թե միջնադարով զբաղվող մասնագետի համար երկու կարևոր պայման

գոյություն ունեն` միջնադարյան ձեռագրերը հաղթահարելն ու սիրելը և օտար լեզուների իմացությունը: Ի դեպ, շուտով սկսեցի զգալ, որ մեզ` Աելիտա Դոլուխանյանի սաներիս, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության և «Մայր ցուցակի» բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանն առանձնացնում է` «Դոլուխանյանի աղջիկներ» կոչելով:

Այսօր իմ կյանքի հետաքրքիր և սպասված օրերից են Ուսուցչիս հետ հանդիպումները Մաշտոցի անվան Մատենադարանում. այստեղ` շքեղ սրահում, կողք կողքի աշխատում ենք (ոգևորիչ պահ ինձ համար), իսկ ընդմիջման ժամին գրուցում ամենատարբեր թեմաների շուրջ: Այդ գրույցների ընթացքում Ա. Դոլուխանյանն ընդգծված սիրով և հարգանքով վերակենդանացնում է նաև հիշողություններ միջնադարի նվիրյալներից մեկի, իր ուսուցիչ և գիտական ղեկավար Ասատուր Մնացականյանի մասին, և ես հասկանում եմ, որ իրեն էլ բախտ է վիճակվել հանդիպել հոգատար Ուսուցչի և վայելել նրա շոայլ, սակայն պահանջկոտ վերաբերմունքը:

Հետաքրքիր ու բովանդակալից են նաև Ա. Դոլուխանյանի հետ ճանապարհորդությունները. վառ են Գյումրիի, Ծաղկաձորի և Տաթևի գիտաժողովների հիշողությունները: Հատկապես անմոռաց էին Գյումրիի մոտ գտնվող «Ծակ քարով» անցնելու իմ դրվագը, որի քաջալերողը կրկին նա էր, այցելությունը Օրբելի եղբայրների թանգարան Ծաղկաձորում:

Ինձ համար արդեն սեփական ճանապարհի ուղեկիցներ են դարձել նրա կարևորած այն արտահայտությունները, որոնք մենք, որպես ասպիրանտներ և դասավանդողներ, հաճախ լսել և լսում ենք նրանից. «Երկաթը տաք-տաք են ձեծում», «Այսօրվա գործը վաղվան մի թողնիր», հատկապես կարդինալ Մերսիեի խոսքը` «Եթե խնդրելու որևէ կարևոր բան ունեք, խնդրեցեք շատ զբաղված մարդկանց»:

Իմ հաջողությունների, կայացման, գիտական կյանքի ճանապարհի հետաքրքիր ընթացքի համար խորապես շնորհակալ եմ սիրելի Ուսուցչիս՝ միջնադարի նվիրյալ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանին, ումից սովորել և սովորում եմ:

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ՝
ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**

Ուսանողական տարիներին նախաքննական շրջանում դասախոսությունների տեսրեբում սկսում էինք ընդգծել «կարևոր» (համենայնդեպս մեզ այդպիսիք թվացող) մտքերը, որ եթե անգիր էլ չանեինք, ապա հաստատ լավ կհիշեինք: Ուրախանում էինք, որ մի էջում մի քանի նախադասություն էր այդ բախտին արժանանում: Երբ սկսեցի Աելիտա Դոլուխանյանի դասախոսություններում ընդգծել «կարևորները», տեսա՝ ամբողջական էջեր են գունավորվում, ու չհիշելու կամ անկարևոր ոչինչ չի մնում այլևս: Հետագայում հասկացա, որ նման դասախոսություն կազմելու համար գիտելիքների ահռելի պաշար է հարկավոր ուսանողներին «ջուր» չհրամցնելու համար:

Հենց այսպիսին է Դոլուխանյան դասախոսը՝ գիտական նորույթները, բանասիրական հայտնագործությունները, որոնցում ինքն էլ նշանակալի դեր ունի, անպայման հասցնում է լսարան: Ու ոչ միայն այդ նորույթները: Նա այն սակավաթիվ գիտնական-դասախոսներից է, ովքեր ուսանողի հետ խոսում են համաշխարհային մշակույթից, ժամանակակից արվեստից: Իր դասախոսություններում անպայման անդրադառնում է այլազգի հայագետների մոտեցումներին: Մի

քանի օտար լեզուների իմացության շնորհիվ Ա. Դոլուխանյանը հայ ընթերցողին ներկայացրել է եվրոպացի հայագետներին ու նրանց գործունեությունը¹, ինչպես նաև թարգմանություններ²:

Ուսանելու տարիներին, երբ ասում էր, որ ձեռագրերից մեկում այսինչ բանն է կարդացել, կամ այսինչ չափածո գործը (ներքոդ կամ տաղ) աղերսներ ունի այնինչ արձակ գործի հետ (ճառ կամ խրատ)³, ինձ թվում էր անիրական ու անհասանելի: 16-17 տարեկան ուսանողը դժվար է պատկերացնում դրանք, ձեռագիրը նրա համար դեռևս վերացական ու միայն հոգևոր արժեք է: Նույն կարգի ու գրեթե անհասկանալի էին ինձ համար Մատենադարանում Ա. Դոլուխանյանի գիտական գրույցները գիտնականների ու ակադեմիկոսների հետ:

Առաջին օրը Մատենադարանում ներկայացա որպես Ա. Դոլուխանյանի ասպիրանտ: Գիտաշխատողներից մեկը բարեհոգի կատակեց՝ Դոլուխանյանը գրոհում է Մատենադարանի վրա: Այդ պահին վերջինս երկու ասպիրանտի ու մի քանի մագիստրանտի գիտական ղեկավար էր, իսկ մի քանի նախկին ասպիրանտներ արդեն գիտությունների թեկնածու ընթերցողներ էին:

Այսօր էլ ջերմությամբ եմ հիշում, թե ինչպես էր կողքիս նստած սովորեցնում ձեռագրացուցակներից օգտվել կամ որ իր հետազոտությունների ընթացքում իմ թեզի թեմային առնչվող որևէ իրողության էր հանդիպում, անմիջապես այդ մասին տեղյակ էր պահում: Մեզ համար զարմանալի էր, որ մյուս ասպիրանտների ղեկավարները տևա-

¹ Ֆելիքս Ներ և հայ քրիստոնեական մատենագրությունը, Երևան, 2001: Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002: Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003: Էդուարդ Դյուլորինեն հայագետ, Երևան, 2004: Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ («Եվրոպացի հայագետներ») 5-րդ, Երևան, 2008: Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011: Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2015:

² Բնագրից թարգմանել է Պ. Ռոնսարի, Թալի դը Մոլենի, Մ. Քոզեմի, Ջ. Քոլինզի, Ռ. Դոմենթի, Մ.Շվարցի ստեղծագործություններից:

³ Տե՛ս, օրինակ, Դոլուխանյան Ա. Գ., «Աստվածաշնչային մի պատգամի դրսևորումը Գրիգոր Տաթևացու և Մկրտիչ Նաղաշի մոտ», Բանբեր Մատենադարանի, թիվ 18, Երևան, 2008, էջ 109-114:

կան ժամանակ (երբեմն տարիներ) չէին հետաքրքրվում իրենց սաների գործերով, ու մենք էլ ավելի էինք գնահատում մեր գիտական ղեկավարին, որն իր սուղ ժամանակից միշտ բաժին էր գտնում մեզ համար (ի դեպ, սա շարունակվում է մինչև օրս):

Իմ, ինչպես և հավանաբար շատերի կյանքում կա մեկը, որ միշտ ուղղորդում, խրախուսում ու աջակցում է: Իմ հոգևոր մորը՝ Աելիտա Դոլուխանյանին եմ պարտական իմ աշխատանքային ու գիտական հաջողությունների համար: Նրա երաշխավորությամբ եմ աշխատել ժուռնալիստիկայի բնագավառում (Հայաստանի ժուռնալիստների միության անդամ եմ ու տարվա մրցանակակիր): «Պատմաբանասիրական հանդեսի» հայերեն բաժնի խմբագրի պաշտոնը, որ մեծագույն պատիվ է ինձ համար, ևս իմ սիրելի ղեկավարի միջամտությամբ եմ ստանձնել (դպրոցական տարիքում պապիս գրադարանում փառահեղորեն բազմաձև հանդեսի համարները թերթում էի ու մտածում՝ կգա երևի մի ժամանակ, որ այս հոդվածները կկարդամ ու լիովին կընկալեմ, իսկ տարիներ անց արդեն հաճելի պարտավորություն ունեի խմբագրելու դրանք):

Մատենադարանում ընթերցողի կարգավիճակից գիտաշխատող դառնալու համար էլ պարտական եմ իմ գիտական ղեկավարին: Հիշում եմ իմ առաջին գիտական հոդվածը, որ ավելի շատ հրապարակախոսական էր. նայեց ու ասաց՝ սա գիտական հոդված չէ: Նրա մեծ աջակցությամբ հոդվածը վերածվեց գիտականի, որին հետո հաջորդեցին այլ հոդվածներ:

* * *

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Դոլուխանյանի գիտական անդուլ գործունեությունը, որի արդյունքը պարբերաբար հրատարակվող մենագրությունները, աշխատություններն ու հոդվածներն են, ներառում է նաև մանկավարժական մեծ նվիրումը:

Երկար ժամանակ մտածում էի, թե Ա. Դոլուխանյանը, որ հայ գրականության բոլոր շրջաններն է ուսումնասիրում⁴, ինչու դասագրքեր չի հրատարակում: Շուտով դրա ժամանակն էլ եկավ: Միայնց հերթագայելով լույս տեսան նրա հեղինակած ուսումնական ձեռնարկները⁵, որոնք խիստ գործնական են ու սպասված ոչ միայն ուսանողների, այլև գրականությամբ ու հատկապես միջնադարյան գրականությամբ զբաղվողների համար:

Տարիներ առաջ մասնավոր մի գրույցի ընթացքում Դոլուխանյանը նշեց, որ մեծ պատասխանատվություն է դասագիրք գրելը, և կուտակած գիտելիքներն ու մանկավարժական փորձն այժմ թույլ են տալիս ձեռնամուխ լինել այդ գործին:

Բազում պարզկների ու մեղալների արժանացած, միջազգային գիտաժողովներում ու արտերկրում ընդհանրապես Հայաստանն արժանավայել ներկայացնող, պրպտուն ու անհանգիստ գիտական մտքի տեր և անչափ կանացի ակադեմիկոս Աելիտա Դոլուխանյանը, որի ներկայությունը պատիվ է արևմտյան ցանկացած նշանավոր համալսարանի համար, որպես իսկական հայրենասեր գերադասում է ապրել ու աշխատել հայրենիքում:

ՆԱԻՐԱ ԹԱՄԱՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
Հելսինկի, Ֆինլանդիա*

⁴ Տե՛ս, օրինակ, Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ, 1987: Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը, 1999: Շարլ Ազնավուրը բանաստեղծ, 2002: Գրիշա Դարբինյանի գրական խոհերը, 2005: Ներսես Մոկացի (կյանքը, գործունեությունը), 2009: Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, 2009: Չարլզ Դաուսեթի «Սայաթ-Նովա» աշխատությունը (տե՛ս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Զեկուցումների ժողովածու, էջ 23-35, Երևան, 2012):

⁵ Հայ ժողովրդական բանահյուսություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2008: Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006: Հայ գրականության տեսություն, Երևան, 2006: Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2012: Գեղարվեստական գրականության վերլուծման մի քանի սկզբունքներ (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2013:

ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Հմուտ, խիստ և պահանջկոտ ղեկավար, ահա նման ձևով կարելի է բնութագրել Աելիտա Գուրգենի Դոլուխանյանին, բայց այս բնութագրումը կլինի շատ թերի և գրեթե ոչինչ չի ասի նրա մասին որպես անհատականություն: Տիկին Դոլուխանյանը եղել է իմ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարը: Բառերով չի կարելի բնութագրել այն հոգատարությունը, որը նա դրսևորում է իր սաների, այդ թվում նաև իմ նկատմամբ: Նրա գիտակ խորհուրդների շնորհիվ հնարավոր է դառնում իրականացնել գիտական աշխատանք՝ միաժամանակ թեմային հաղորդելով պահանջվող արդիականությունը:

Տիկին Դոլուխանյանը հանդիսանում է հայ հին և միջնադարյան գրականության երախտավորներից մեկը, և անգամ այժմ, երբ մենք՝ նրա սաները, դասավանդում ենք բուհի տարբեր ֆակուլտետներում, մեծ հաճույքով լսում ենք նրա դասախոսությունները, և ամեն անգամ ունկնդրելով նրա դասախոսությունները՝ լրացնում ենք մեր գիտելիքները նորանոր և ուշագրավ մասնագիտական փաստերով:

Խոսելով նրա անձի մասին՝ հարկավոր է նշել, որ վերջինս ոչ միայն հոգատար և ուշադիր է իր սաների նկատմամբ, այլ նաև աշխատակիցների, և կարևորագույն հասկություններից մեկը նրա պատասխանատվության զգացումն է: Նա ինքը օրինակ է բոլոր իր աշխատակիցների համար, և կամա թե ակամա այդ հասկությունները ղեկավարից փոխանցվում են նրանց: Դա է պատճառը, որ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը առաջիններից մեկն է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը օժտված է ոչ միայն գիտական ձիրքով, ղեկավար լինելու շնորհով, այլ նաև մարդ է՝ մարդ մեծա-

տառով, որին միշտ կարող ես ապավինել, որին կարող ես վստահել նաև քո նվիրական գաղտնիքները: Նրանից միշտ կարող ես ստանալ հոգատար ծնողի խորհուրդ: Այս բոլոր հատկություններն են, որ ամբողջական են դարձնում նրա անհատականությունը և նրա անձը սիրելի բոլորիս համար:

ՊԱՐՈՒՅՐ ՄԱՀԱԿՅԱՆ

*ՀՀ ԿԳ նախարարի խորհրդական,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ԽՈՍՔ ՀՈՐԱՔՐՈՋՍ ՄԱՍԻՆ

Ամեն մարդ չի կարող ասել, թե հորաքույրն իր կյանքում կարևոր դեր է ունեցել: Ես կարող եմ հպարտությամբ և երախտագիտությամբ ասել, որ հորաքույրս՝ Ալլան (տանը մենք նրան Ալլա ենք կոչում), իմ գիտակցական ողջ կյանքի ընթացքում եղել է կողքիս:

Մանկական տարիքից հետաքրքիր հիշողություններ ունեմ՝ կապված նրա հետ: Ալլան սիրում էր մեզ հետ լրջորեն զբաղվել: Նա շարունակ մեզ մղում էր դեպի արվեստը, գրականությունը և թատրոնը: Տիկնիկային թատրոնի բոլոր ներկայացումներին ես և Հասմիկը (հորաքրոջս աղջիկը) պարտադիր այցելում էինք նրա ուղեկցությամբ: Ես սիրում էի, և մինչև հիմա էլ սիրում եմ, նրա հետ մշակութային վայրեր այցելել: Վերջերս հինգ օր եղանք Թիֆլիսում՝ հորաքույրս, Հասմիկը և ես: Թիֆլիսում նա շատ է եղել և ամեն այցին իր պարտքն է համարել այցելել հայ գրողների պանթեոն՝ անպայման թարմ ծաղիկներով: Ալլան հաճախ էր մեզ համար կարդում, և մենք սիրում էինք նրան լսել: Մանուկ հասակում Հոհան եպիսկոպոսի նովելներն ինձ զվարճալի էին թվում, հիմա դրանք ընկալում եմ որպես ողբերգություն, իսկ երբ հուզիչ ձևով ընթերցում էր Հովհաննես Թումանյանի «Մարո» պոեմը, խոր ցավ ու զարմանք էի ապրում:

Ալլային չլսել չէիր կարող. նա հետաքրքիր էր պատմում, մեկնաբանում, հարցերի միջոցով ճշտում, թե մենք ինչ հասկացանք:

Մեծացա, ընդունվեցի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ: Ասեմ, որ դա էլ պատահական չէր: Միշտ ուզեցել եմ նմանվել հորաքրոջս: Նրա կեցվածքը, խոսքը, արտաքինը ինձ համար եղել են իդեալ, որին ձգտել եմ նմանվել: Ինստիտուտում հորաքույրս ինձ մի նոր որակով ներկայացավ: Նա իմ դասախոսն էր՝ սիրելի դասախոսը, խստապահանջ էր բոլորի նկատմամբ, առավել ևս իմ. չէ՞ որ կրում էի նույն ազգանունը, ուրեմն պետք է լինեի առաջիններից: Ես հիանում էի նրա վարած դասախոսություններով, նրա գիտելիքների անսպառ պաշարով: Հիշում եմ. մի օր «հերթ էի պահել» և սեմինարի ժամանակ պատրաստ չէի, կանչեց պատասխանելու, և դա սարսափելի պահ էր ինձ համար: Երկու ստացա, մի քանի օր չէի կարողանում դեմքին նայել, որովհետև զգում էի, որ նա խիստ վիրավորված է:

Վաղուց արդեն մանկավարժական գիտությունների թեկնածու եմ ու դոցենտ, և դարձյալ հորաքույրս իմ կողքին է: Նա մեր ամբիոնի վարիչն է, իմ ավագ գործընկերը, իմ գիտական ղեկավարը, որը խստորեն հետևում է գիտական առաջընթացիս: Եթե որևէ մասնագիտական հարցի պատասխան եմ փնտրում, այդ հարցի պատասխանը ստանալու ամենակարճ ճանապարհը հորաքրոջս դիմելն է: «Քայլող հանրագիտարան» թևավոր խոսքը կարծես հենց նրա մասին է:

Խոստովանում եմ, որ յուրօրինակ ձևով հարգում ու սիրում եմ նրան և ներքուստ մղվում եմ գիտական ու մանկավարժական հարցերում բավարարել նրա արդարացի խիստ պահանջները:

ՌՌԻԶԱՆ ԴՌԻԼՌԻՄԱՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԻՄ ՄԻՐԵԼԻ ԳԻՏՆԱԿԱՆ – ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Տարիներ առաջ, երբ ընդունվեցի բուհ, առաջին դասի զանգի հետ ներս մտավ դասախոսի համար բավականին երիտասարդ, նորաձև հագուկապով, թագուհուն բնորոշ կեցվածքով Աելիտա Դոլուխանյանը: Ողջ լսարանը (շուրջ 100 ուսանող), հիացմունքից շունչը պահած, ակնապիշ նայում էր ամբիոնի առջև կանգնած հմայիչ դասախոսին: Եվ որքան մեծ եղավ զարմանքս, որ այդքան կոկիկ, ճաշակ թելադրող, նուրբ ու քնքուշ և առաջին հայացքից փխրուն թվացող կինը այսպես գեղեցիկ ու սահուն կարող էր խոսել: Աչքերս մի քանի անգամ կլորացան ընդամենը մի դասաժամից ստացած գիտելիքներից, այնքան տպավորիչ ու պատկերավոր ներկայացրեց միջնադարյան գրականությունը, որ թվում էր՝ հենց այդ ժամանակներում եմ ապրել: Այսուհետ ես անհամբերությամբ էի սպասում բանահյուսության և միջնադարյան գրականության դասերին: Հետաքրքրությանս գումարվում էր նաև փոքր-ինչ անհանգստություն և լարվածություն, որովհետև բավականին խստապահանջ էր: Ես ջանասիրաբար աշխատում էի, որ լավագույնս հանձնեմ կիսամյակային քննություններս: Անհագորեն սկսեցի ուսումնասիրել միջնադարը. անգիր էի անում տաղերը, գանձերը, տարվեցի միջազգային արժեք ունեցող Մ. Խորենացու «Հայոց պատմությամբ», մարդկության մեծագույն հանճարներից մեկով՝ Նարեկացիով, որն այսօր էլ ինձ համար սեղանի գիրք է դարձել. իմ ամենօրյա գեղարվեստական աղոթագիրքը, որի համար պարտական եմ Ա. Դոլուխանյանին:

Երևակայել անգամ չէի կարող, որ երկու տասնամյակ հետո թեկնածուական ատենախոսությանս ղեկավարը կլինեի իմ սիրելի դասախոսը: Որքան հաճելի էր աշխատել Ա. Դոլուխանյանի ղեկավարությամբ, այդքան էլ տագնապած էի նրա պահանջկոտությունից: Մոր նման հոգատար էր, բայց նաև մոր պես գիտեր անաչառ գնահատել և քննադատել. ոչ մի թերացում չէր հանդուրժում: Ատենախոսությանս թեման էր «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության ուսուցումը դպրոցում»: Հիշում եմ՝ ասում էր. «Աշակերտներին անհրաժեշտ է հա-

սու դարձնել, որ հենց Թումանյանի՝ ողջ կյանքն ու գործունեությունը հայրենասիրական դաս է մատաղ սերնդի համար»: Ես էլ որպես պատգամ փոխանցում եմ իմ ուսանողներին, որ նրանք ևս ամեն ինչ անեն, որ հայ երեխան ընկալի Ամենայն հայոց բանաստեղծի մեծությունը, հիշի, թե ինչ են ասել նրա մասին մեր ազգային մեծերը, իմանա նրա ազգանվեր գործունեության մասին, գիտակցի, որ Թումանյանը շարունակում էր «ոսկեդարի» հայ մեծերի՝ Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Եղիշեի, միջնադարի վիթխարի դեմքերի՝ Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Սայաթ-Նովայի ավանդույթները:

Այսօր, առավել քան երբևէ, հպարտ եմ, որ աշխատում եմ Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի այն ամբիոնում, որը ղեկավարում է Աելիտա Դոլուխանյանը: Վաստակաշատ դասախոսի շնորհիվ հասկացել եմ, որ ամենամեծ ձեռքբերումը մեծագույն պատասխանատվությունն է: Իր գործի անմնացորդ նվիրյալն է մեր սիրելի դասախոսը: Առիթ եմ ունեցել ներկա գտնվել նրա քննություններին, ամենայն անկեղծությամբ կարող եմ ասել, որ բացահայտել եմ մեծ գիտնական-գրականագետին տարբեր կողմերից. մանկան նման ոգևորվում է, երբ ուսանողը պատասխանում է բոլոր հարցերին, գիտի գնահատել, արժևորել բանիմաց ուսանողին, իսկ երբ տգետ ուսանող է հանդիպում (իսկ այդպիսիք իսկապես կան), արդեն մեկ ուրիշ մարդ է նրա մեջ արթնանում. չի կարողանում զսպել զայրույթը, կարծես խոր ցավ է ապրում, որ վաղվա հայաստանցին, հայ մարդը չի կարողանալու իր երեխային հայեցի դաստիարակել: Մեծ հայրենասեր է Ա. Դոլուխանյանը. եղել է երկրագնդի տարբեր վայրերում, ճանաչել է ամբողջ Եվրոպան, Ամերիկան, բայց նրա համար սրբատուրբը իր Հայաստան աշխարհն է, իր Երևանը: Իսկական քաղաքացին ու մանկավարժը մտահոգ է նոր սերնդի ապագայով. «Մեզ պետք են լավ ուսուցիչներ. ուսուցիչը ևս զինվոր է»:

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Գուրգեն Դոլուխանյանի ընտանիքը (1950թ.)



Արտիստական
ԱրՄԱՐԱՅԱՆ

Աելիտա Ղուրխանյան



Արշակ Զորիչանյան



Աելիտա Ղուրխանյան



*Լևոն Դոլուխանյանը՝ Ա. Դոլուխանյանի ավագ եղբայրը:
Եղել է ՀՀ Անասնաբուծության և անասնաբուծության գիտահետազոտական
ինստիտուտի Դաշտային կերարտադրության բաժնի վարիչը:
Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ:
Երկար տարիներ դասավանդել է ՀՀ գյուղատնտեսական ակադեմիայում,
ի թիվս այլ առարկաների դասավանդել է նաև էկոլոգիա:*



*Վիլիկ Դուրխանյանը՝ Ա.Դուրխանյանի կրտսեր եղբայրը:
«Ինտերստանոկ» գործարանի գլխավոր տնօրեն,
ՀՀ Անանիա Շիրակացու մեդալակիր:
Նրա նախագծած հաստոցները երկար տարիներ օգտագործվել են
ԳՂՀ-ում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում,
ուր բազմիցս մեկնել է երկարաժամկետ գործուղումներով:
Ունի ԽՍՀՄ գյուտերի և հայտնագործությունների կոմիտեի կողմից
շնորհված 18 հեղինակային իրավունք:*



*Սուսաննա Դոլուխանյանը՝ Ա. Դոլուխանյանի քույրը:
Երկար տարիներ աշխատել է «Նեյտրոն» գիտաարտադրական
միավորումում որպես առաջատար ինժեներ-կոնստրուկտոր
(Արևմտահայաստան, 2008թ.)*



*Չախից աջ՝ Հայաստանի կոմկուսի քարտուղար Ադասի Չարչոլյանը և
Ա. Դուրխանյանի հայրը՝ Միսիանի շրջանի գործկոմի նախագահ
Գուրգեն Դուրխանյանը (1946թ.)*



*Ա. Դոլուխանյանի հայրը՝ Գուրգեն Դոլուխանյանը,
մայրը՝ Աղավնի Սարուխանյանը, դուստրը՝ Հասմիկ Մարտիրոսյանը,
և թոռնուհին՝ Շուշան Խուրշուդյանը*



*Ա. Դոլուխանյանի դուստրը՝ Հասմիկը,
փեսան՝ Արիկ Խուրշուդյանը, և թոռնուհին՝ Շուշանը (1986թ.)*



Հասնիկ Մարտիրոսյանը 4 տարեկանում



Հասմիկ Մարտիրոսյանը



*Հասմիկը՝ Աստղանտայում (ԱՄՆ),
ուր մեկնել էր հերթական զեկուցման*



Ա. Դորուխանյանը դստեր՝ Հասմիկի հետ



*Շուշան Խուրշուդյանի և Թրևոր Շվարցի հարսանիքը Բոստոնում:
Ձախից աջ՝ Արիկ Խուրշուդյան, Հասմիկ Մարտիրոսյան, Շուշան
Խուրշուդյան, Թրևոր Շվարց, Մերի Շվարց, Թոմ Շվարց (2014թ.)*



Շուշանը և ամուսինը՝ Թրևոր Շվարցը (2014թ.)



Ա. Դոլուխանյանը թոռնուհու՝ Շուշանի հետ (2008թ.)



*Ա. Դոլուխանյանը դստեր՝ Հասմիկի հետ,
Փարիզի Դոռսեյ թանգարանում (2003թ.)*



*Վիլիկ եղբոր որդին՝ Ռուբեն Դուլուխանյանը:
Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորելիս ծառայել է
Խորհրդային Միության բանակում (1987թ.):
Այժմ «Բնակարանային» գործարանի գործադիր տնօրենն է:*



*Ա. Դուրյանյանի քրոջ որդին՝ տեխնիկական գիտությունների թեկնածու,
ծրագրավորող Տիգրան Գրիգորյանը՝
„Trionary Code Technologies” կազմակերպության
հիմնադիր տնօրեն*



*Ա.Դոլուխանյանը եղբոր աղջկա՝ մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ռուզան Դոլուխանյանի հետ Թիֆլիսում՝
Վրաստանի պառլամենտի շենքի մոտ (2016թ., մայիս)*



*Ձախից աջ՝ Ա. Նոյուխանյանի քրոջ դուստրը՝ Արմինե Գրիգորյանը՝
ԱՄՆ-ի Պենսիլվանիայի համալսարանի Wharton դպրոցի շրջանավարտ,
և աղջիկը՝ Հասմիկ Մարտիրոսյանը՝ Բոստոնի Նորթիսթերն համալսարանի
իրավագիտության դոկտոր (Մոնրեալ, 2005թ.)*



*Ա. Դուրխանյանը զեկուցում է կարդում Բոստոնում (1995թ.):
Ձախից աջ՝ Ա. Դուրխանյան, Հասմիկ Մարտիրոսյան, Եվա Մեծորյան*



*Ա. Դուրխանյանը զեկուցում է կարդում Փարիզում՝
Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի հանճարեղ երկի 1000-ամյա հոբելյանին նվիրված
միջազգային գիտաժողովում (2003թ.)*




*Ձախից աջ՝ Շուշանը, Հասմիկը,
Սուսաննան և Աեղիտան (Վատիկան, 2006թ.)*



*Աելիտա Դոլուխանյանը
Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու մոտ (2008թ.)*



*ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ա. Դոլուխանյանին է հանձնում
ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչման
հավաստագիրը (2012թ.)*



*ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Մահակյանը մարտի 8-ի առթիվ
Ազգային ժողովի պատվոգրեր է հանձնում Խ.Աբովյանի անվան
ՀՊՄՀ մի խումբ կանանց (2017թ.)
Ձախից աջ` ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյան, Մարիամ Բսպիրյան,
Կինա Կարախանյան, Աելիտա Դուրյանյան,
ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Մահակյան,
Աիդա Թովուզյան, Սրբուհի Գևորգյան, Լատրա Ասատրյան,
Ալվարդ Գրիգորյան, Ռուզան Թադևոսյան*



*Իւ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Միրզախանյանը Ա. Դուրուխանյանին է հանձնում
ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալը (2012թ.)*



*Ելույթ Խ. Աբովյանի անվան
ՀՊՄՀ կառավարման խորհրդի նիստում
Խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյան*



*Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր Արտուր Դուկասյանի հետ
Խ.Աբովյանի տուն-թանգարանում (2008թ.)*



*Ձախից աջ՝ մեծանուն պատմաբան,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան,
մեծատաղանդ գրող Նորայր Աղայան, Ա. Դոլուխանյան (2011թ.)*



*Ամերիկահայ նշանավոր պատմաբան
Ռիչարդ Հովհաննիսյանի հետ՝
Անի մայրաքաղաքի 1050-ամյակին նվիրված
գիտաժողովի ժամանակ*



*Աշխարհահռչակ նկարիչ Ռոմեո Բրիտոյի հետ:
Ձախից աջ՝ Հասմիկ Մարտիրոսյան, Ռոմեո Բրիտո,
Ա.Դոլուխանյան (Մայամի, 2009թ.)*



*Խորհրդային Միության ժողովրդական արտիստ,
աշխարհահռչակ խմբավար Հովհաննես Չեքիջյանի հետ*



*Վիեննայի միաբանության արքանայր Պողոս Գոջանյանի հետ
(Վիեննա, 2012թ.)*



*Վահան Թեքեյանի բանաստեղծությունների գրքի անգլերեն
թարգմանության շնորհանդեսի ժամանակ:
Ձախից աջ՝ ՀՊՄՀ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան,
ամերիկահայ նշանավոր գրականագետ,
բարերար Երվանդ Ազատյան և Ա. Դոլուխանյան*



*Ձախից աջ՝ գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյան,
ՀՀ ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյան,
Ա. Դոլուխանյան և ՀԳՄ նախագահ Լևոն Անանյան*



*«Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի հետ (2008թ.):
Ձախից աջ՝ Հ. Հովհաննիսյան, Ս. Հարությունյան, Ա. Չաքարյան, Պ.
Չոբանյան, Ա. Դոլուխանյան, Լ. Հովհաննիսյան, Հ. Բարթիկյան*



*Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ին նվիրված հանրային հեռուստատեսության
«Երգ երգոց» հաղորդումից հետո (2012թ.)
Ձախից աջ՝ Դիանա Մարկոսյան՝ ՀՊՄՀ լրատվության և
հանրության հետ կապերի վարչության պետ,
Ջուլիետա Գյուլամիրյան՝ մայրենիի ամբիոնի վարիչ,
Արկադի Շեկունց՝ ՀՊՄՀ մշակույթի կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Ա. Դուրյանյան,
Հեղինե Խաչատրյան՝ սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան*




Հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները Խ.Աբովյանի անվան կաբինետում




Ա.Ռոլուխանյանը դասախոսության ժամանակ

ԸՆԾԱՅԱԳՐԵՐ



**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի ընծայագիրը
Ա. Դոլուխանյանին՝ Խ. Արուստիանյանի անվան
ՀՊՄՀ ասպիրանտուրա ընդունվելու առթիվ (1964թ.)**



*Ա. Գրուխանյանի գիտական ղեկավար, եզակի միջնադարագետ
Ասատուր Մնացականյանի ընծայագիրը (1970թ.)*

ՆՄՐԵՎԻ ԱԿՏԻՆԵՍ,

Պոստալային փոստով ցանցում շատ քիչ է
այն փաստաթղթերը, որոնք
հավանաբար կհայտնվեն հետագայում -
հարկային փաստաթղթեր, որոնք
կարող են լինել հարկային փոխանցման
կտրոններ, որոնք այս պահին գեղեցիկ
փետր զուտ հատուկ է պահելը:
Արեգակը հարձակվում է այս կտրոնի
թղթերի վրա արագորեն ցանկա-
լիցում:

Ա. Գրիգորյան

4. 09. 1998

Բ. Երևան

Անվանի նարեկագիտ, բանասիրական գիտությունների դոկտոր
Արշալույս Ղազինյանի ընծայագիրը Ա. Դոլուխանյանին՝
«Գրիգոր Նարեկացի: Բանաստեղծական Արուեստը»
մենագրության վրա (1998թ.)

ԱՅԼ ԱՅՈՒԹԵՐ

Պարբայր՝ Երբ
Պարբայր՝ Երբ

Ձեր կողմակցությամբ ցերեկային
նեղիս Գրգռելու թոյն հնարավորություն
յուրեք կարծի համարման հարցերում
ցերեկ և ցերեկ Ձեր մարտնչական
և ցերեկային ձերանկար է:
Ձերանկարն է կողմերի և
Ձեր մարտնչական համար:
Անցանց մարտնչական, հաճախ,
հոգի են առնում և զանազան
հարցերի կողմնակցություն, երբ
մարտնչական անկողին ու
պարբ է: Կողմնակցական
28.11.05

**Տաղանդավոր մտավորական, ասմունքող, ՀՀ ոստիոյի և
հեռուստատեսության վաստակաշատ ու երևելի դեր
Սարգիս Նազարյանի բացիկը Ա. Դոլուխանյանին՝
Հրանտ Մաթևոսյանին նվիրված ցերեկային հետո (2005թ.)**

Aelita Dolukhanyan

From: "Bradley Schaffner" <bschaffn@fas.harvard.edu>
To: <aelita@web.am>; <hasmarto@yahoo.com>
Sent: Friday, September 04, 2009 9:17 PM
Subject: Thank you

Dear Dr. Dolukhanyan,

On behalf of the Harvard College Library, I wish to acknowledge and thank you for your gift of your book *Problema dushi i tela v srednevekovoi armianskoi poezii* (Erevan: 2008). This book is a welcome addition to the Harvard College Library's Slavic collections.

Since 1638, Harvard has benefited from the generosity of friends, faculty, alumni and others interested in creating and expanding our library collections. The College Library makes every effort to add donated material to our permanent collections.

Thank you again for your interest in and support of Harvard's libraries.

Sincerely yours,

Bradley Schaffner

--
Bradley L. Schaffner
Head, Slavic Division
Widener Library, Harvard College Library
Harvard University
Cambridge, Massachusetts 02138 USA

T: 617-496-4363
F: 617-496-2902

9/4/2009

**Հարվարդի համալսարանի գրադարանի սլավոնական
բաժնի վարիչ Բրեդլի Շաֆների շնորհակալական նամակը
Ա. Դուրյանյանի «Проблема души и тела в средневековой армянской
поэзии» գրքի 2 օրինակներով գրադարանի գանձարանը
հարստացնելու վերաբերյալ**

Aelita Dolukhanyan

From: "Paulus Kodjanian" <p.kodjanian@hotmail.com>
To: <aelita.dolukhanyan@gmail.com>
Sent: Friday, November 26, 2010 12:59 PM
Subject: your books

Ազնի Տիկին,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր «Արսես Մուկացի» եւ «Ֆրեդերիկ Ֆելդին Հայագետ»
թանկագին աշխատանքները Վիեննայի մեր Մխիթարեան մատենադարանին համար:

Լաւագոյն մաղթանքներով՝

Հայր Պօղոս Գոճանեան

12/25/2010

*Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայր
Պողոս Գոջանյանի շնորհակալական նամակը (2010թ.)*

Вечный вопрос



Азита Долуханян. —
Проблема души
и тела в
средневековой
армянской
поэзии. — Ереван:
Зангак-97, 2009. —
256 с.

Филолог Азита Долуханян из Еревана написала монографию на интереснейшую тему — «Проблема души и тела в средневековой армянской поэзии». Сразу может возникнуть вопрос — в какой, собственно, может быть интерес к этой теме у неспециалистов? Можно задать, однако, контрвопрос: кого считать специалистами — тех, кто занимается Арменией или Средневековьем вообще? Не будем тнуть с ответом: в поэзии всех народов, в любую эпоху проблема души и тела была одной из важнейших, если не важнейшей. Ибо всегда и всюду поэзия рассматривала и рассматривает человека в его двойственной сущности — как существо духовное и в то же время плотское, если хотите — животное, из породы млекопитающих со всеми вытекающими отсюда границами его бытия и соответственно отражениями их в литературе.

А если так, то особый интерес должен представлять опыт армянской поэзии. И потому, что история ей уходит в глубокую древность, и потому, что Армения, рано принявшая христианство, всё же дитя Востока и для ней характерно причудливое переплетение культурных влияний. А также — не в последнюю очередь — потому, что нилейская историческая судьба этой страны, многовековое противостояние с соседями иной цивилизационной и религиозной ориентации не могли не выработать особой стойкости в отстаивании своих духовных приоритетов, обычаев, образа жизни. И всё это не могло не повлиять на армянскую поэзию, не придать ей неповторимого колорита.

Таковы были ожидания заинтересованного читателя, открывающего монографию Азиты Долуханян, и, сразу скажем, ожидания эти были не напрасными. Автор подробно анализирует избранную проблему, показывая различные её особенности на протяжении, округленно считая, тысячелетия. Философские идеи Платона и Аристотеля, раннее христианство, наследие Авесты и даже эпоса о Гильгамеше — таковы истоки, питающие средневековую армянскую литературу, из чего, разумеется, не следует, что каждый поэт обращался ко всем этим соннам. Но поэты всегда — дитя своей эпохи, и в данном случае надо, скорее, говорить о влиянии на них национальных мыслителей, усвоивших, переработавших и синтезировавших воззрения их предшественников из разных культур. Уже в V веке армянский философ Египсе чётко сформулировал: «Человек есть смесь небесного и земного, менее от неба и более от земли». Понятно, что христианская традиция жёстко формировала представления о том, что небесное превалирует земного, что земное греховно, и т.д. В то же время другая, ещё более ранняя, «первостепенная», Авеста, провозглашая дуализм, считает его составляющие равными.

Азита Долуханян подробно прослеживает движение от тех времён, когда подчинённость телесного духовному была сама собой разумеющейся и не сковывала поэтическую мысль, к тем временам, когда восторжествовало представление о единстве человеческой природы. Подсказкой об этом — в творчестве замечательных поэтов, от Григора Нарекаци, творившего в X веке, до Саят-Новы (XVIII век).

Не забывает Азита Долуханян и вклад русской мысли в рассматриваемую ею проблему, обращаясь к Валерию Брюсову, знатоку и переводчику древнерусской поэзии, и к Федору Батюшкову, чей труд «Сказание о споре души с телом в средневековой литературе», вышедший в 1890 году, имел большое значение для своего времени, и к другим именам.

Остается выразить надежду, что монография «Проблема души и тела в средневековой армянской поэзии» будет воспринята с интересом и послужит методологическим пособием при изучении истории литератур.

Юрий БАРАНОВ

*Ռուս անվանի գրականագետ Յուրի Բարանովի
գրախոսությունը «Литературная газета» թերթում (2010թ.)*

ԿԵՆՍԱՓՈՐՁԻՑ ԾՆՎԱԾ ՄՏՔԵՐ

Կյանքը սիրում է նրանց, ովքեր հաղթահարում են կյանքի հարուցած դժվարությունները:

* * *

Իմաստությունը հաճախ ծնվում է չար մարդկանց պատճառած ցավից:

* * *

Նեղանձնական վրեժխնդրությամբ լցվում են թույլ ու նախանձ մարդիկ:

* * *

Քծնանքն ու աստվածային ձիրքն անհամատեղելի են:

* * *

Ինչպես մարմինը կարիք ունի ամենօրյա մաքրման և խնամքի, այնպես էլ գիտելիքն ամենօրյա նորացման պահանջ ունի:

* * *

Երբեք մի արա ստոր արարք որևէ մեկի նկատմամբ. կյանքը կարող է մի օր նրան դարձնել քո դատավորը:

* * *

Կողքիդ թշնամին թակարդ լարելիս ավելի է ջերմանում քեզ հետ՝ ստոր արարքը քծնանքով քողարկելու համար:

* * *

Եթե կարծում ես, թե ոչ մեկին չար բան չես կամենում, ապա քո մտավոր առավելությունն արդեն չարիք է նախանձների համար:

* * *

Ուրախացի՛ր քո հաջողություններով, նույնիսկ թշնամուդ անկումը թող քեզ հրճվանք չպատճառի:

* * *

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական դարավոր հարստությունն ապացույց է, որ հայերը շարունակ մտածել են ազգային պետականությունը պահելու մասին:

* * *

Իսկական ուժեղ անհատները լրտեսների կարիք չունեն. նրանց լրտեսները ինտուիցիան ու կենսափորձն են:

* * *

Հասարակությունն այնժամ առաջընթաց կունենա, երբ քո անձից բացի մտածես նաև ուրիշների շահերի մասին:

* * *

Երիցս իրավացի են նրանք, որոնք ճամփորդելը համարում են զիտություն:

* * *

Եթե մեկը ուրիշների նկատմամբ ունեցած ատելությամբ ու նախանձով է առաջնորդվում, մտքի առաջընթաց չի կարող ունենալ:

* * *

Հայրենիքը պետք է սիրել այնպես անշահախնդիր, ինչպես սիրում ես զավակներիդ ու ծնողներիդ:

* * *

Աստված մի անխախտ հավասարություն ստեղծել է. բոլոր մարդիկ մահկանացու են:

* * *

Երջանիկ են այն մարդիկ, որոնք ամեն օր աշխատանքի են գնում մեծագույն հաճույքով:

* * *

Ինչպես փչացած ատամն այլևս չբուժվելու դեպքում հեռացնում են, այնպես էլ մարդու կյանքից պետք է հեռացվի այն մարդը, որը նման է փչացած ատամի:

ՉՏՊԱԳՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

ՌՈՔԵՐՏ ԲԸՐՆՍ ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է¹

Մնաք բարով, լեռնե՛ր, մնաս բարով, հյուսի՛ս,
Ծննդավայր իմ թանկ, անգին իմ երկի՛ր,
Ուր էլ որ շրջեմ, ուր էլ թափառեմ,
Լեռների բլուրներն ընդմիջտ կսիրեմ:

Իմ սիրտը լեռներում է, իմ սիրտն այստեղ չէ,
Իմ սիրտը լեռներում է, եղնիկ է նա որսում,
Վայրի եղնիկ բռնում, այծյամին վազում,
Իմ սիրտը լեռներում է, ուր էլ որ լինեմ:

Մնա՛ք բարով, լեռներ՝ ճերմակ ձյունով ծածկված,
Մնա՛ք բարով, սարեր՝ ցածում դաշտեր կանաչ,
Մնա՛ք բարով, անտառ ու թավուտների վայրի,
Մնա՛ք բարով, հեղեղ ու ջրվեժի շառաչ:

Իմ սիրտը լեռներում է, իմ սիրտն այստեղ չէ,
Իմ սիրտը լեռներում է, եղնիկ է նա որսում,
Վայրի եղնիկ բռնում, այծյամին վազում,
Իմ սիրտը լեռներում է, ուր էլ որ լինեմ:

¹ Թարգմանված է Վիլյամ Սարոյանի համանուն պիեսի անգլերեն բնագրից (տե՛ս William Saroyan, *Eight plays*, Yerevan, 1987, p. 18-19).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ -----	5
2.	ОТ СОСТАВИТЕЛЯ -----	7
3.	A WORD FROM THE AUTHOR -----	9
4.	ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ -----	11
5.	ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ -----	12
6.	ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒ. ՍՈՒՎԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ -----	13
7.	ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐ Ռ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ Ա. ԳԱԼՍՏՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ -----	14
8.	ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԸ -----	16
9.	ԿՅԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԵԹՎԵՐԸ -----	29
10.	ՊԱՐԳԵՎՆԵՐ, ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻՆ, ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ -----	31
11.	ԱՅՅԵԼԱԾ ԵՐԿՐՆԵՐ -----	33
12.	Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	35
13.	ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ -----	37
14.	ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	39
15.	ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՐՔԵՐ -----	58
16.	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ -----	59
17.	ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ -----	61
18.	ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ, ԱՌԱՋԱԲԱՆԻ ՀԵՂԻՆԱԿ ԵՎ ԿԱԶՄՈՂ -----	96
19.	Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԸ՝ ԳՐԱԽՈՍ -----	100
20.	Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆԸ՝ ԹԱՐԳՄԱՆԻՉ -----	119
21.	ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	121
22.	ՀԱՐՑԱԶՐՈՒՅՅՆԵՐ -----	123

23.	Ա. ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆԸ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ -----	125
24.	ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԵՐ -----	131
25.	ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՍԱՆԵՐԻՑ -----	156
26.	ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ -----	170
27.	ԸՆԾԱՅԱԳՐԵՐ -----	203
28.	ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ -----	206
29.	ԿԵՆՍԱՓՈՐՁԻՑ ԾՆՎԱԾ ՄՏՔԵՐ -----	210
30.	ՉՏՊԱԳՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ -----	212